

ԽՐԱՏՔ ՆՈՒՇԻՐՈՒԱՆԻ

ԵՐԵՎԱՆ 1966



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

НАЗ И Д А Н И Я Н У Ш И Р В А Н А

Подготовка текста и предисловие
Б. Л. ЧУКАСЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1966

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԵՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽՐԱՏՔ ՆՈՒՇԻՐՈՒՄՆԻ

Աշխատասիրությամբ

Ր. Լ. ՉՈՒԴԱՍՋՅԱՆԻ

A $\frac{\pi}{39336}$

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1966



Միջնադարյան արձակի ամենահամառոտ ու սեղմ ձևերից մեկը՝ խրատը, արևելյան ժողովուրդների մեջ մեծ տարածում ունեցող գրական տեսակներից է եղել:

Որպես ժողովրդի դարավոր կենսափորձի, նրա բարոյական հասկացողությունների, նրա մտածողության արդյունք՝ խրատները ստեղծվել, գրի են առնվել ու մշակվել դեռևս հին աշխարհում՝ իրենց վրա կրելով ժամանակի իշխող գաղափարախոսության, սոցիալ-քաղաքական հարաբերությունների կնիքը:

Հին աշխարհի և միջնադարի խոշոր մտածողների ու գործիչների, անգամ առանձին իշխողների անունով շատ խրատներ են մեզ հասել, որոնք հիմնականում իրենց ծագումով ժողովրդական են, բայց մշակողների գրչի տակ նոր երանգ ու բովանդակություն են ստացել: Հեղինակային համարվող խրատները՝ ապրելով ժողովրդի մեջ՝ դարերի ընթացքում նույնպես մշակվել ու հղկվել են, հարստացել են նրա կենսափիլիսոփայությանը և նորից վերադարձել գրականությանը:

Միջնադարյան գրական երկերում առատորեն սփռված խրատները, որոնք արտացոլել են ժամանակի բարոյական նորմաները, դարեր շարունակ կրոնական պատվիրաններին ու գործող օրենքներին զուգահեռ կիրառվել են որպես հասարակական տարբեր խավերի ու դասակարգերի, մարդկանց առօրյա հարաբերությունները կարգավորող ոչ-պաշտոնական

«օրենքներ»։ Այս իսկ առումով դրանք մեծ ժողովրդականության են ունեցել, ուսուցվել են դպրոցներում, քարոզվել են բեմերից։

Գրական այս տեսակը բեկվել է շափածո ու արձակ խոսքի մեջ, հարստացրել է միջնադարյան բարոյա-խրատական գրականությունը, նոր հարցեր ու խնդիրներ թելադրել նրան։

Այս տեսակետից իսկ խրատները ճանաչողական մեծ արժեք են ներկայացնում և արժանի են բազմակողմանի ուսումնասիրության։

Խրատագրությունը Խառնում և մեհակա երկրներում։ Սասանյան Պարսկաստանում զրադաշտական կրոնական գրականությունը զուգահեռ ծաղկում է ապրել նաև խրատագրությունը։ Պահլավ գրականության մեջ Ատրպատ Մարասպանտի, նրա որդի Զարթոշթի և թոռ Ատրպատ Զարթոշթի, Բախթաֆրիտի, Բուզարգմահի, Խոսրով Նոշիրվանի, Վեհ-զատ Ֆիրոզի, Ատար Ֆարնբազի Ֆարխուզադի և այլոց անուններով հուշակված շատ փանդնամակներ ու անդարձներ (խրատականներ) են գոյություն ունեցել¹։ Խրատագրությունը Խրանում արտակարգ վերելք է ապրել VI դարում, երբ «արդարադատ» հուշակված Նուշիրվան (Անուշիրվան) արքայի² (531—579)

¹ Տե՛ս Andarj-i Aoshnar-i Danak, Edited by Ervad Bamanji Nasarvanji Dhabhar, M. A., Bombay, 1930, p. VII. Այստեղ և հետագայում անունները տառադարձվում են ըստ աղբյուրների։

Հիշված խրատականներից պահլավագետ Հ. Թիրյաքյանի ջանքերով հայերեն են թարգմանվել Ատրպատ Մարասպանտի, Վեհ-զատ Ֆիրոզի, Խոսրով Նոշիրվանի խրատական գրքերը. տե՛ս «Ատրպատ Մարասպանտայ Անդարձ», թարգմանեց ի պահլավ բնագրին հանդերձ ծանոթությամբ Հ. Թիրյաքյան, Նյու-Յորք, 1909։ «Գանձ շայեկան, Փարսի Պերոզ, Խոսրով Կուստան, Մատիկան ճատրակի», թարգմանեց Հ. Թիրյաքյան, «Հանդէս ամսօրեայ», 1955, էջ 49—56, 189—204, 1956, էջ 491—518, 1957, էջ 191—213։ Նույնը նաև առանձին գրքով «Զորս պահլավիկ բնագիրներ», թարգմանեց պահլավ բնագրին Հ. Թիրյաքյան, Վիեննա, 1957։

² Սասանյան Խոսրով Ա Նուշիրվան արքան՝ Կավատի որդին, տիրող զրադաշտական վերնախավի կողմից հուշակվել է արդարադատ։

հրամանով կազմվում են խրատական գրքեր, հնդկական բնագրից պահպանվածների է թարգմանվում հանրահոշակ «Քալիլե և Դմնե» խրատականը:

Պահպանված գրականության մեջ խրատը հավասարազոր է դիտվել գիտությանը. «Գանձ շայեկան» մատյանում խրատը հետևյալ ձևով է բնորոշվում. «Յատկութին ականջալուր խրատու (այն է) զյորդորս ոստակս քաջ ճանաչել (իմա՝ տրուած բարի խրատները լաւ ի միտ առնուլ—Հ. Թ.) և անոնցմով վարիլ և այն գործը որ կատարել չէ արժան, (անկէ) զգուշանալ»³: Այս նույն հուշարձանում հարց է տրվում. «Վասն մարդկան հնարքներու մէջ ո՞րը աւելի զօրաւոր է». պատասխանը՝ «Գիտութիւն և խրատ»: Իսկ թե սրանցից ո՞րն է ավելի կարեւոր, պատասխանը լինում է. «Խրատ ի ճանաչումն իրաց և գիտութիւն յընտրողութիւն (լաւ է)»⁴:

Խրատական գրականությունը իր ուրույն ու կարեւորագոյն տեղն է ունեցել հայ մատենագրության մեջ: Հատկանշական է, որ մեսրոպյան տառանիշներով գրված առաջին հայերէն խոսքերը իմաստություն ու խրատ ձեռք բերելու, նրանց էության մեջ թափանցելու հորդոր են եղել՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», և ասլա ողջ «Առակաց գիրքը»:

Եւ այս ավանդը դարեր է ապրել, կրթել սերունդներ: Միջնադարի հայ մտածողները բարձր են գնահատել խրատի ուսուցողական դերը, նրա դաստիարակչական նշանակությունը և իրենց գործունեության ընթացքում միշտ դիմել են նրան:

Դեռեւս խրատի դասական տեսակին՝ կարճ ու համառոտ, անգամ ասացվածքի բնույթ կրող գիպուկ խորիմաստ խոսքի ենք հանդիպում Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ին կցված «Խրատք»-ում⁵, որը հաճախ առանձին արտագրվել է հայկա-

³ «Զորս պահավիկ բնագիրներ», էջ 29:

⁴ Անդ, էջ 31—33:

⁵ Եղնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Բիֆլիզ, 1914, Էջ 209—219:

կան ձեռագրերում: Ճիշտ է այդ խրատականը ավելի կրոնական բովանդակություն ունի, բայց դրա մեջ կան նաև, ինչպես դիտում է Մ. Աբեղյանը, «ընդհանուր կենցաղական բովանդակությամբ բարոյական խրատներ... Մի քանի այսպիսի իմաստալից ասացվածներ կան և «Եղծի» մեջ»⁶:

Հետագա դարերի մեր մատենագրության մեջ հանդիպում են և թարգմանական և ինքնուրույն խրատականներ՝ իրենց բաղում խմբագրություններով ու տարբերակներով («Խրատք Խիկարայ», «Բանք իմաստասիրաց», «Խօսք և բանք իմաստասիրաց լաթինացոց ասացեալ» և այլն):

Ավելի ուշ ժամանակներում՝ XIII դարում, Հովհաննես Երզնկացին իր ճառերից մեկում խրատի կարևորության մասին հետևյալն է գրում. «... Տղայի միտքն որպէս յատակ հայելի է, մի՛ թողուր որ անխրատ վարժի, որ մեղաց ժանգն ի վերայ չնստի և չապականէ: Տղայի միտքն որպէս կակուղ մոմ է, զրարի խրատն և զիմաստութեան ուսումն դիր ի վերայ մատենհար, որ այլ պիղծ և վատթար իրք չկերպարանի ի միտքն: Տղայի միտքն յատակ ակն է աղբերջրոյ, մի թողուր ճապաղի կամ ցամաքի, և դառն և աղտաղտուկ և օտար ջուր ի ներքոյ մտանէ և խառնեալ պղտորի...»⁷:

Արաբական գրականության մեջ ևս խրատը ընդունված գրական տեսակ է եղել: Դրա մասին է վկայում VIII դարի

⁶ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, էջ 148—149:

⁷ «Բաղմավկա», 1887, էջ 211—212: Հովհաննես Երզնկացին այս միտքը իր խրատական բանքերից մեկում հետևյալ կերպ է ասում.

Բայց կամիմ ևս խօսել բանիկ մի բանի,
Լըսեցէք իմ եղբայրք՝ ու որդիք սիրելի.
Տղայոց միտք գերթ մոմ կակուղ կու լինի,
Մատնէհար դիր դուստմն, որ շուտով նըստի:

Ջերթ դուսիկ է մատղաշ, որ հեշտ ուրիշ,
Հայելի է պալծառ, որ ժանդ նա շունի,
Ջերթ դուսիկ է խալաս, որ այսպ շերեի,
Ջերթ ջոհար ակն է լալ, որ լոյս կու ցաթի:

(Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 185)

ականավոր գրական գործիչ Իբն ալ-Մուկաֆֆայի «Ալ-ադաբ սալ-քաբիր» և «Ալ-ադաբ աս-սադիր» («Խրատներ մեծ գործերի համար» և «Խրատներ փոքր գործերի համար») գրքերի գոյությունը: Իբն ալ-Մուկաֆֆան «Խրատներ փոքր գործերի համար» գրքի առաջաբանում գրում է. «Այս գրքում բերվում են այն մարդկանց արժանավոր ասույթները, ովքեր հոգ են տարել կատարելագործելու իրենց հոգին, պարզելու իրենց հայացքները և մտածողության աշխուժությունը: Դրանց մեջ ցույց են տրվում արժանի արարքների ու արհիվ գործերի կատարման ուղիները»: Արաբ գրականության պատմաբան Հանս ալ-Ֆախուրին ալ-Մուկաֆֆայի գրքերում ընդգրկված խրատների հիմնական մասը թարգմանական է համարում: «Երևու գրքերում էլ,— գրում է ալ-Ֆախուրին,— ղգացվում է պարսկական, հնդկական ու հունական մշակույթի ազդեցությունները: Պարսկական ազդեցությունը ղգացվում է բաղմաթիվ փոխառյալ ասացվածքների վրա, որոնք թարգմանված են պարսկերենից, Սասանյան ժամանակաշրջանին վերաբերող պատմական օրինակներում և որոշ խորհուրդներում, որոնք թելադրված են Արտաշիրի ժամանակաշրջանի ղեկավարման սխտեմից... Երևու աշխատություններում պարզորոշ բացահայտվում է պարսկական մշակույթի և մտածելակերպի ազդեցությունը, որոնք իրենց հետքերն են թողել ժամանակի քաղաքական ու հասարակական կյանքի վրա»:

Այս նույն ալ-Մուկաֆֆան պահլավերենից արաբերենի է թարգմանում նաև «Քալիլ և Դմնեն»: Այստեղ կենդանիների ու թռչունների բերանով տրվող խրատներում ձգտում կա կարգավորելու ընդհանրապես հասարակական հարաբերությունները և մասնավորապես իշխողների ու նրանց ենթակաների պարտավորությունները իրար նկատմամբ:

Վաղ միջնադարյան Իրանում լայն տարածում են ունեցել Նուշիրվանի անունով հայտնի խրատները, որոնք հետագա-

⁸ Ханна аль-Фахури, История арабской литературы, т. 1, М., 1959, стр. 341-342.

յում, ավելի ուշ ժամանակներում, թարգմանվելով նոր պարսկերենի ու հարևան ժողովուրդների լեզուներով և կամ օգտագործվելով գեղարվեստական գրականության մեջ, մեծ ճանաչում են ստացել:

Ան-Նադիրի «Ֆիհրիստում» («Ցանկում» — մոտ 988 թ.), որտեղ հիշատակված են ժամանակի արաբերեն կարևոր ինքնուրույն ու թարգմանական գրքերը, պարսկական, հունական, հնդկական և արաբական բարոյա-խրատական գրականության շարքում նուշիրվանին վերագրվող երեք խրատական է հիշված⁹: Իսկ ավելի վաղ ժամանակներից նուշիրվանի անունով պահլավերեն մի փոքրածավալ խրատական է պահպանվել՝ «Անդարձի խոսքով-ի Կավատան» խորագրով¹⁰:

Նուշիրվանի խրատների նոր պարսկերեն տարբերակները, որոնք իրենց ծագումով հիմնականում ժողովրդական են և հարուստ նրա կենսափորձի ու կենսափիլիսոփայության արտացոլումով, Մերձավոր Արևելքի երկրներում լայն ճանաչում են ստանում X դարից հետո, նամանավանդ որ Ֆիրդուսին դրանք չափածոյի է վերածում և մեծ չափով նույնպես խրատների տարածմանը:

Նուշիրվանի անունով խրատականներ են պահպանվել նաև հայկական միջնադարյան ձեռագրերում՝ երկու խմբագրություն՝ և բազմաթիվ տարբերակներով, որոնցից մեկը XVIII դարից սկսած բազմաթիվ հրատարակություններ է ունեցել:

⁹ К. А. Иностранцев, Персидская литературная традиция в первые века Ислама. „Записки Императорской академии наук“ по историко-филологическому отделению, т. VIII. № 13, стр. 17.

¹⁰ См. E. W. West, *Pahlavi Literature*, „Grundriss der Iranischen Philologie“, II, 112; Ed. G. Brown, *A Literary History of Persia*, v. I, Cambridge, 1956, p. 107: Այս խրատականի մի քանի այլ հուշարձանների հետ 1912 թ. հայերենի է թարգմանել պահլավագետ Հ. Թիրյաքյանը, որը 1957 թվականին լույս է տեսել «Հանդէս ամսօրեայ»-ում, էջ 198—202: Նոր պարսկերեն թարգմ. տե՛ս ماهیار ثوابی، اندرز دانايدان، نشریه دانشکده تربیت مدرس، شماره ۱، ۱۳۳۹، ص ۱۴۳—۱۴۴.

Հայ-իրանական գրական առնչությունները ուսումնասիրելիս մենք ուշադրություն դարձրինք Նուշիրվանի խրատների հայերեն թարգմանությանը, որի լեզվա-ոճական առանձնահատկությունները մեզ ենթադրել տվին, որ թարգմանությունը կատարվել է պարսկերենից և ոչ արաբերենից, ինչպես կարծել են առանձին բանասերներ: Հետագա պրպտումները և ձեռքի առկ եղած Նուշիրվանի պարսկերեն խրատների համեմատությունը հայկական տարբերակների հետ բավականին մեծ ընդհանրություններ ի հայտ բերեցին և հաստատեցին մեր ենթադրությունը (մանրամասն տե՛ս էջ 33—47):

Հայկական թարգմանությունը արժեքավորվում է մասնավորապես նրանով, որ այստեղ խմբագրական միջամտությունները ավելի քիչ են, քան պարսկական տարբերակներում, իսկ քանի որ խրատների պարսկական ամբողջական բնագիրը դեռևս չի հայտնաբերվել՝ հայկական թարգմանությունը կարող է բնագրի վերականգնման համար վստահելի հիմք հանդիսանալ:

Նուշիրվանի խրատների գաղափարական բովանդակությունը: Վերը հիշված Նուշիրվանի պահլավերեն խրատականը պրոֆ. Բրագինսկին դնահատում է ընդհանրապես իբրև ձանձրալի, կեղծ բարեպաշտական երկ, որի մեջ, ինչպես ժամանակի մի շարք այլ դիդակտիկ ստեղծագործություններում, թափանցել է երկրային կյանքի անցողիկության, ունայնության և երկնային թաղավորությանը ապավինելու գաղափարը¹¹:

Նուշիրվանի թե՛ պարսկերեն և թե՛ հայերեն խրատականները՝ ունենալով հանդերձ այս գծերը, միաժամանակ պարունակում են այնպիսի խորհուրդներ, որոնք արտացոլում են նաև ժողովրդական լայն խավերի տրամադրությունները, նրանց կենցաղի առանձին կողմերը, ֆեոդալական բռնակալության պայմաններում մարդկանց փոխհարաբերություննե-

¹¹ Տե՛ս Н. С. Брагинский, Из истории таджикской народной поэзии, М., 1956, стр. 231-232.

րը: Եթե խրատականում աշխատավորներին խորհուրդ է տրվում իշխողներին հնազանդ լինել, նրանց նկատմամբ նվիրվածություն հանդես բերել («Իշխանաւոր երբ սակաւ սէր ցուցանէ, զինքն մեծ սիրեցէք», ԺԱ.—3*), ունեորններին չնախանձել («Ընդ տօլվաթաւորքն մի նախանձիք», ԺԱ.—7), ազատների և նրանց ծառաների հարաբերություններին չխառնվել, չլրանք չփչացնել («Ի մէջ... ծառայի և ազատի շառ մի ձգէք», Ժ—6), ապա մյուս կողմից իշխողներին կոչ է արվում զթառամ լինել դեպի իրենց ստորադրյալները («Յանպատեհ պատճառէ զծառայն մի ծեծէք», Ը—8), սահմանափակել իրենց ազահությունը («Յորբերոյ իրք մի խրբնաք», ԺԶ—6), իրենց բեռը սեփական ուժերով տանել, ուրիշներին չշահագործել («Զծեր բեռն ալոց մի բառնայք», Լրացուցիչ № 1):

Իշխող վերնախավերում, ուր կեղծիքն ու քծնանքն է իշխում, ուր ամենուրեք որոգայթներ են լարվում, ուր վախն ու կասկածն է տիրում և ամեն քայլափոխում քսությունն ու մատնությունն է տեր ու տնօրեն,— նման պայմաններում, ահա, հորդոր է արվում ոչ ոքի չվստահել («Ամենայն մարդոյ խօսք մի վստահանայք», ԺԶ—1), բարձրաձայն շնորհակցել, մարդկանց հաղորդակից չդարձնել իրենց խոհերին ու մտքերին («Զծեր խորհուրդն մարդկաց մի ասէք», Ի—8), միաժամանակ նաև ականջալուր չլինել ուրիշների զրույցներին ու բամբասանքներին («Ի տեղի որ քսել կենայ՝ ականջ մի ղնէք», Ի—9):

Խրատներում արտացոլված կան նաև առևտրական հարաբերությունների առանձին կողմերը («Փոխ ի նորքսակ մարդոյ մի առնուք», Է—4), զուտ շահի վրա հիմնված դազանային բարքերը («Ընկեր զայն սիրեցէք, որ յւրմէն իրք մի շահիք», ԻԱ—7, «Յայն մարդկացն որ ձեղ շահ չկայ իւր կեանքն ու մահն թող ձեղ մէկ թվենայ», Լրացուցիչ № 3):

Նուշիրվանի խրատականում առանձին խորհուրդներ են տրվում նույնպես համեստության, խոհմության, ճշմարտասիրության, ընտանեսիրության, խոստումնապահության, աշ-

* Հայկական առանիշներով ցույց է տրվում խրատականի բաժինը՝ Թարկը, իսկ արաբականով՝ խրատի համարը:

խատասիրության և այլ հարցերի վերաբերյալ, որոնք առանձնակի վերցրած իսկապես ազնիվ հորդորներ են, սակայն խրատների ընդհանուր հենքի մեջ դրանք այնպիսի պահանջներ են, որոնք նպաստում են շահագործողական հարաբերությունների ամրապնդմանը:

Նուշիրվանի պարսկերեն խրատականի կազմվելու ժամանակը: Նուշիրվանի պարսկերեն խրատականի մեջ առկա բազմաթիվ արաբական փոխառություններ ու ոճեր պարսիկ բանասերներին իրավացիորեն հանգեցրել են այն եզրակացության, որ այս խրատականը թարգմանություն է արաբերենից¹²:

Արաբական տարբերակը հավանաբար կազմվել է այն օրերին, երբ արաբական աշխարհում պահլավ աղբյուրները հախուռն կերպով թարգմանվում էին արաբերենի (VIII—IX դդ.): Արդեն վերը հիշեցինք, որ արաբ մատենագիր Ան-Նադիմը Նուշիրվանին վերադրվող երեք արաբերեն խրատական է հիշատակում, որոնք մինչև օրս չեն հայտնաբերվել: Ճիշտ այնպես, ինչպես իրանական շատ հուշարձաններ պահլավներենից թարգմանվել են արաբերենի, իսկ այնուհետև արաբերենից՝ պարսկերենի, այդպես էլ պատահել է Նուշիրվանի խրատականի հետ:

Նուշիրվանի պարսկերեն խրատականը արաբերենից թարգմանված լինելու լրացուցիչ կոմսն է այս խրատականի լեռնագրադյան ու տաշքենոյան գրչագիր տարբերակների հետաքրքիր առաջաբանը, որտեղ հետևյալ ակնարկը կա. «Տարեգրողները այսպես են պատմում, որ հին ժամանակներում աշամի թագավորների մոտ ընդունված կարգ է եղել...»¹³:

¹² مکتبی میهنی. از خاندان ترکیه. مجله دانشکده ادبیات. ۲۰. سال چهارم، ۱۳۳۵، ص ۵۰. (U' n ջ թ ա ր ա Մ ի ն ո վ ի, Թուրքիայի գանձարաններից, «Թեհրանի համալսարանի գրականության ֆակուլտետի հանդես», հ. 4, № 2, 1957, էջ 60):

¹³ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի լեռնագրադյան բաժանմունքի ձև. Շ—112, էջ 232a, և Տաշքենտի արևելագիտական ինստիտուտի ձև. 5255, էջ 104a:

Արաբները աջամ արտահայտությամբ ակնարկում են օտարներին, մասնավորապես պարսիկներին: Նշանակում է այս իսկ առաջարանը ինքնին վկայում, հավաստում է արաբական բնագրի առկայությունը:

Նուշիրվանի խրատների մեզ հայտնի բազմաթիվ պարսիկերեն, անգամ հայերեն տարբերակների մանրակրկիտ բազմատումբ և առանձին արտագրությունների ժամանակ կատարված հավելումների քննությունը ցույց են տալիս, որ այս խրատականը, ինչպես շատ այլ խրատականներ, դարերի ընթացքում անընդհատ խմբագրվել, համառոտվել ու լրացվել են նոր խորհուրդներով: Հավանաբար խրատականի այս իսկ բնույթը անհրաժեշտություն է դարձրել և առանձին խմբագրողների թեկադրել է մատնացույց անելու, որ այն անհատական, սովյալ դեպքում Նուշիրվան արքայի ստեղծագործությունը չէ, այլ համահավաք բնույթ ունի: Այս են ապացուցում մի քանի տարբերակների առաջարանները, որտեղ խոսվում է նախ խրատականի կազմության և սույա գրա կիրառական նշանակության մասին: Վերոհիշյալ լենինգրադյան (1628 թ. գրչություն է) և տաշքենայան (ժամանակը անհայտ է) տարբերակների առաջաբանում ասված է. «Երբ իշխանությունն ու թագավորությունը Անուշիրվանին հասավ և նրա արդարադատությունը աշխարհում տարածվեց ու փառքը ամենուրեք հասավ և թագավորությունը կայունացավ, նրա հրամանով ժամանակի իմաստուններին հավաքեցին ու նրանցից քսաներեքին ընտրեցին: Թագավորը նրանց ասաց. ամեն մեկդ մի խորհուրդ-իմաստություն ասացեք, որպեսզի մենք օգտվենք զրանցից և մեզանից հետո հիշատակ մնա: Իմաստունները հավաքվեցին և Անուշիրվանի ներկայությամբ յուրաքանչյուրը մի խորհուրդ-իմաստություն ասաց. ընդամենը քսաներեք խորհուրդ-իմաստություն եղավ... Անուշիրվանը հրամայեց այս քսաներեք իմաստությունները ոսկեջրով գրել: Եվ զրանք իր մոտ էր պահում, որպեսզի կարևոր գործերի ժամանակ այդ խրատները կարդա և զրանցով առաջնորդվի»¹⁴:

¹⁴ Անդ,

Տաշիկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի արևելագիտական բաժնի գրադարանի № 247 և 338 ձեռագրերում առկա Նուշիրվանի խրատականի տարբերակում այդ խրատների հայտնաբերման մասին մի ամբողջ պատմություն է հյուսված, որը և վերնագրված է «Նուշիրվան աղելի (արդատի) դամբարանի հեքիաթը»։ Ըստ այս պատմության Բաղդադի խալիֆ Մամուն ակ-Ռաշիդի (?) հրամանով պեղվում է Նուշիրվանի դամբարանը, որտեղ և հայտնաբերվում են նրա խրատները։ Ինչպես հայտնի է Մամուն արքայացան խալիֆը (786—833), որ իշխել է 813—833 թվականներին, իր բռնակալությամբ հանդերձ՝ նպաստել է գրականության ու արվեստների զարգացմանը իսլամական աշխարհում. նրա օրոք հատկապես ծաղկում է ապրել թարգմանական գրականությունը։ Պետք է ենթադրել, որ արևելյան արձակի, մասնավորապես հեքիաթագրության մի հետաքրքիր նմուշ հանդիսացող դամբարանի այդ պատմության մեջ պահպանվել է Նուշիրվանի խրատների արաբերեն թարգմանվելու հուշը, որը մեզ հղում է IX դարի սկիզբները։

Իսկ X դարում խրատների պարսկերեն տարբերակի գոյություն ունենալու պերճախոս վկայությունը «Շահնամեն» է։

Հայտնի է, որ Ֆիրդուսին իր երկը հորինելիս ձեռքի տակ է ունեցել բազմաթիվ պահլավերեն աղբյուրներ։ Տվյալ դեպքում էլ նա կարող էր դիմած լինել Նուշիրվանի խրատների պահլավ բնագրին, սակայն մեզ հայտնի պարսկերեն խրատների տարբեր խմբագրությունների և Ֆիրդուսու մշակման թուղթիկ համեմատությունն իսկ տալիս է բառերի ու ոճերի այնպիսի ընդհանրություններ, որոնք վկայում են պարսկերեն խմբագրությունից Ֆիրդուսու օգտվելու հանգամանքը. բավարարվենք մի քանի օրինակներով։

«Շահնամեն»¹⁴

Նուշիրվան

تو بیدار باش و جویا نادر باش
خودمند و راد و بی آزار باش

همیشه بی آزار باشی K-78

¹⁴ա. Մեջբերումները կատարում ենք «Շահնամեն» 1933 թ. Մոհամադ Բամազանու հրատարակությունից فردوسی، شاهنامه، جلد ۴، بتصحیح ومقابلہ محمد مضانی، تهران، ۱۳۱۲ ص ۵۲۹-۵۳۰



دانشی اندو زید K-75

چمنین داد پاسخ که دانش گزین
چه خواهی که بر تو کنند آفرین
که نادان فزونی ندارد زخاک
بدانش پسندیده کن جان پاک

مبادا که باشی تو پیمان شکن
که خاکست پیمان شکن را کفن

چو پیمان کنی مشکن ای پاکتن
نباشد پسندیده پیمان شکن
 $L^2(d^4-4)$

بیدادگر مباشید K-82

زبیدادگر شاه باید گریز
کز خیزد اند، جهان رستخیز

چو گستاخ باشد زبانش ببد
زگفتار او دشمن آید سزد

زبان را به بد گفتن چه مکنید
 $T(d^4-1)$

دل و مغز را دور دار از شتاب
خرد باشد شتاب اندر آید بخواب

اندر کارها شتاب مکنید $L^1(1-2)$

بر ارزا نیان گنج بسته مدار
بمخشای بر مرد پرهیزکار

از انیان را از گنج ما خشنود کمید
K - d n m p

ورایدونکه دشمن شود دوستدار
بشوره زمین تخم نیکی مکار

در زمین شوره تخم مکارید R-41

Նուշիրվանի խրատականի աղբյուրները: Խրատականի կաղմվելու ժամանակի մասին խոսելիս բերեցինք այն հետաքրքիր վկայությունը, որ Նուշիրվանի հրամանով պալատական իմաստուններն են հավաքել խրատականի խորհուրդները: Խրատականի ընձեռած մի քանի տվյալները վկայում են, որ այդ աշխատանքի ժամանակ օգտագործվել են թե՛ բանավոր և թե՛ գրավոր աղբյուրներ:

Կասկածի ենթակա չէ, որ խնդրո առարկա խրատականում նույնությամբ բերված են ժողովրդական բաղմաթիվ խրատներ, առածներ ու ասացվածքներ: Այս ենթադրության լավագույն կովանը խրատներից մեծ մասի բնույթն է. նրանց կարճառոտությունը, պարզությունը, իմաստային դիպուկությունն ու խորությունը ժողովրդական մտածողության արտացոլումն է ամենաբյուրեղյա ձևով: Հետաքրքիր է, որ Նուշիրվանի

19

Բազմաթիվ ընդհանրություններ կան նաև Նուշիրվանի խրատների և X դարի հուշարձան համարվող «Զրույց աշխարհի կարգ ու հարգի և նրանում եղածը մարդկանց բնավորությանը հարմարեցնելու մասին» խրատականի միջև:

«Զրույց...»¹⁶

کارها با نذیرشده و تدبیر کن
Գործերը մտածելով ու խոհեմությամբ
(թելքիրով) կատարիր:

د. مردم تا آرزومند آمن مباش
Զփորձած մարդկանց մի փառահիր:

آزموده را دوباره میازمای
Փորձածին կրկին մի փորձիր:

اگر د. کاری شروع خواهی کردن
نخست بپروان آمدن بنگر
Որեկ գործի մեջ մտնելուց առաջ
դուրս գալու մասին խորհիր:

بجنتك اندر اشتی را جای نگاه دار
Կալի ժամանակ հաշտությամբ տեղ
պահիր:

وعدہ ممکن کسی را و اگر کنی خلاف
مکن
Ոչ որի խոստում մի տուր, իսկ եթե
տվիր, մի խախտիր:

«Երաւոք Նուշիրուանի»

Զամենայն բան թրդրիրով ա-
րարէք (ԺԷ—7):

Զմարդ որ չէք փորձել՝ ընդ
նմա մի վարիք (Բ—6):

Զփորձածն մի փորձէք (Բ—4):

Յամէն բան որ մտանէք յա-
ռաջ գելն իմացէք (Բ—2):

Ի թշնամութեան ժամն սիրոյ
տեղիք պահեցէք (ԺԹ—6):

Զխոստումն որ ի ձեզ՝ մինչև
ձեր անձը մի խնայէք
(Բ—7):

Նուշիրվանի խրատականում այնպիսի խորհուրդների ենք հանդիպում, որոնք իրենց բովանդակությամբ մերթ հիշեցնում, իսկ հաճախ նույնիսկ կրկնում են պահլավ մի քանի խրատականների առանձին խրատներ: Թերևս, ինչպես ասվեց, Նուշիրվանի խրատականը կազմելիս առանձին խոր-

کفتار اندر باز نمودن قاعدہ و قدر این جهان و آنچه در وی است و با مزاج مردمان ساختن، خردنامه، تهران ص ۱۲-۳.
(«Զրույց աշխարհի կարգ ու հարգի և նրանում եղածը մարդկանց բնավորությանը հարմարեցնելու մասին», տե՛ս «Խրատնամակ», Թեհրան, էջ 3—12):

հուրդներ քաղված լինեն վաղուց անտի իրանում տարածված պահլավ խրատականներից: Այսպես, որոշակի ընդհանրություններ կան Ատրպատ Մարասպանտայի և Նուշիրվանի խրատականներում:

Ատրպատ¹⁷

9. . . . և դնա քեզ բարեկամ ըրե
որ քեզ շահավետ լինի:
33. Քինավոր (սխակալ) հ գ ո ր
մարդե հեռի կաց:
40. Ոչ իրավի ոչ սուտի, բնավ
մի երգնուր:
47. Բնավ մարդ վրիպելու (խա-
րելու) ետեև մի՛ լինիր որ
դու ալ շատ ցավ չկրես:
75. Ռատասհուն (ճամարտախոս)
լե՛ր, որ ստուար (անստան)
լինիս:
90. Հանդեպ հորդ և մորդ ակնածսո
և հյու և հրամանաց յեր...

«Երստոք Նուշիրուանի»

- Ընկեր զայն սիրեցէք, որ յիւրմէն
իւր մի շահիք (ԻԼ—7):
Ի յսխակալ մարդկաց ի զատ կա-
ցէք (ԺԼ—4):
Ոչ ճամարիտ և ոչ սուտ ամենեկին
մի երգնուք (ԺԶ—3):
Զխաբես թիւն կտրեցէք, որ ան-
հոգ կենաք (ԺԲ—3):
Թէ զանհոգս թիւն ուզէք՝ զճշ-
մարտութեան արուեստ ուսիրք
(ԺԳ—7):
Զհօր և զմօր հարկիքն մեծ տե-
սէք (ԺԸ—5):

Նուշիրվանի պարսկերեն խրատների ձեռագիր ու տպագիր տարբերակները: Նուշիրվանի խրատները իրանագիտությունյան մեջ հատուկ ուսումնասիրման արժանի չեն եղել և ըստ արժանիւնն ուղղորդության չեն առնվել, ուստի և նրա շատ տարբերակներ մինչև օրս ձեռագրերից դուրս չեն եկել ու չեն հրապարակվել: Եվ պատահական չէ, որ առաջին իսկ պրպտումները Սովետական Միության մի քանի ձեռագրատներում մեզ մի քանի արժեքավոր նոր տարբերակներ ընձեռեցին:

Ստորև բերվում են Նուշիրվանի խրատների այն աղբյուրները, որոնք օգտագործել ենք սույն աշխատանքը պատրաստելիս.

1. R[≈]Նուշիրվանի պարսկերեն խրատների հնագույն տարբերակը պահպանվել է «Ռահաթ օլ-էնսան» վերնագիրը կրող չափածո հուշարձանում: Այստեղ յուրաքանչյուր խրատ բեր-

¹⁷ Ատրպատ Մարասպանտա Անդարձ: Թարգմ. ի պահլավ բնագրին հանդերձ ծանոթությունը Հ. Թիրյաքյան, Նյու-Յորք, 1909:

ված է որպես բնաբան տվյալ խրատի իմաստն իսկ վերաբ-
տադրող ութնյակների համար: Վերջիններս դրված են մոթա-
քարրեք շափով: Այսպես՝

خویشتن شناس را از ما درود دهید
کسی که تن خویشتن را شناسد
بمیدان کام اسب اقبال تاخت
کسی که او شناسند خویشتن
نبا شد بجز دیو یا اهرمن
گر اه خویشتن را شناسند نیست
شنا سنده را چشم بگشاید نیست
یکی دستان گفت مرد بلاس
دکه کمتر کسی خویشتن را شناس

Այս երկը 1883 թվականին իրանագետ Շարլ Շեֆերը հրա-
պարակել է իր «Պարսկական քրեստոմատիայի» առաջին հա-
տորում¹⁸, Շեֆերը «Ռահաթ օլ-էնսանի» հեղինակ է համարում
Շարիֆ անունով ոմն բանաստեղծի, որը պետք է Օնսորիի
ժամանակ (վրձ. 1039—40) կամ նրանից հետո ապրած լինի,
որովհետև 35-րդ ութնյակում հիշատակված կա Օնսորիի անու-
նը: Շեֆերը գտնում է, որ երկի ոճը ավելի հին է, քան ղազ-
նավիների ժամանակաշրջանի գրողների ոճը: Ըստ Շեֆերի
«Ռահաթ օլ-էնսանը» XI դարի ժողովրդական բանաստեղծու-
թյան հետաքրքիր մի նմուշ է:

Ռզա Կուլի խան Հեղայաթը իր հայտնի «Մաջմա օլ-ֆոսա-
հա» ժողովածուում «Ռահաթ օլ-էնսանի» հեղինակ է համա-
րում Բադայե՛ի անունով բանաստեղծին՝ նրան նույնացնելով
Բադի՝ Բալխի (10-րդ դարի երկրորդ կես) հետ¹⁹: Հեղայաթը
Բադայե՛ի տաղաչափած նուշիրվանի խրատականից իր ժողո-
վածուում բերել է առանձին հատվածներ: Դոկտ. Ջաբիուլահ՝
Սաֆան կարծում է, որ սրանք տարբեր բանաստեղծներ են,
որովհետև Բադի՝ Բալխին (վրձ. 381/991—92 թթ.) ժամանա-

¹⁸ St. Ch. Schefer, Chrestomathie persane, t. I, Paris, 1883, p. 205—232.

¹⁹ رضاقلی خان هدایت، مجمع الفصحا، جلد ۱، ۱۳۹۰، ص ۱۷۴—۱۷۵ (Ռզա Կուլի խան Հեղայաթ, Մաջմա օլ-ֆոսահա, հ. 1, 1295—1878, էջ 174—175):

կակից է բանաստեղծների Դակիկիին ու Մանջիբին, մինչդեռ Բադայե'ին ժամանակակից է Սուլթան Մահմուդ Ղազնավիին²⁰։ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատանը մի մատյան կա՝ C—1102, որը հեջրի 708 թ. (1306) զրչություն է, հետևյալ վերնագրով **دست‌آورد** نویسیه و ان عامل از گفتار منک الشجره والحکما بد ادعی

խրատական բանաստեղծների և իմաստունների արքա Բադայե'ի խոսքերով»), ունի «Ռահաթ օլ-էնսանի» ությակնե-րը՝ առանց բնաբան խրատների։

«Ռահաթ օլ-էնսանը» ընդամենը 96 խրատ ունի, որոնց մեծ մասը հերթական կարգի որոշ խախտումով (համարակալումը մերն է—Բ. Չ.) համընկնում է հայկական ընդարձակ խմբագրության օրինակին։ Այսպես՝

«Ռահաթ օլ-էնսան»

«խրատք նուշիրուանի»

39. **دوستایگی پادشاه خانه مگیرد**

Թագավորի հարկաճուխյան մեջ
տուն մի վերցնելու։

Յեզր թագավորի դարպաս և կա-
յարան մի շինէք (2—2)։

40. **دی همراء براه مرید**

Անուղեկից ճանապարհ մի զը-
նացելու։

Անընկեր ի ճանապարհ մի եր-
թաք (2—6)։

50. **بددبیر کودکان کا مکنید**

Երեխաների թղթիբով (խոր-
հրրգով) գործ մի անելու։

Ի աղայոց թղթիբ մի առնուք
(3—3)։

52. **پیروزخان را بخانه مگذارید**

Պատավ կանանց տուն մի թո-
ղելու։

Զօտար կին և գաղաւա ի ձեր
տունն մի թողուք (3—4)։

61. **از زبان شاعران بهیمن کنید**

Բանաստեղծների լիզվից զգույշ
կացելու։

Ի բանաստեղծ մարդկաց պատ-
րաստ կացէք (4Ա—10)։

2. K≈1957 թ. Թեհրանի համալսարանի գրականության ֆակուլտետի հանդեսում հրապարակվել էր պոռֆ. Մոջթաբա

دکتر ذبیح الله صفا، تاریخ ادبیات در ایران، جلد اول، تهران، 20
۴۳۳ ص (1338) (գրկա. Զարիսլլահ Սաֆա, Իրանի գրականության պատ-
մություն, հ. 1, Թեհրան, 1338 1959, էջ 423)։

Մինովիի հաղորդումը՝ Թուրքիայի ձեռագրատներում իր կատարած հետախուզական աշխատանքների արդյունքների մասին²¹։ Պրոֆ. Մինովիին հաջողվել էր սլաւոնաց գրականության պատմութեան համար մեծ կարևորութիւն ներկայացնող մի շարք արժեքավոր ձեռագրեր հայտնաբերել։ Հաղորդման մեջ, ի թիւս այլ ձեռագրերի, նկարագրված էր խրատների մի ժողովածու, որտեղ ամփոփված նյութերի մեջ գտնվում էին նաև Նուշիրվանի ազգարարութիւններն ու խրատները։ Ժողովածուն հեջրի 574 թ. (1178—79) զրշութիւն է և պահվում է Հաֆեզ փաշայի գրադարանում № 328 թվահամարի տակ։

Այս ժողովածուն, որը «խրատնամակ» خردنامہ վերնագիր է ստացել, Նուշիրվանին վերագրվող 9 ազգարարութիւն (مناجی) և 136 խրատ ունի²²։ Սրանց մեծ մասը հիմնականում համընկնում է հայկական օրինակների հետ։ Պարսկերեն այս տարբերակի խրատները լեզվական ու ոճական խմբագրման են ենթարկված, իսկ խրատների հերթականութիւնը խիստ խախտված է։ Բերենը այս «խրատնամակից» մի քանի օրինակներ՝ տալով հայերեն համազորները (խրատների համարակալումը մերն է—Բ. Չ.)։

«խրատնամակ»

«խրատ Նուշիրուանի»

Ազգարարութիւններ

خودشنیدن نشانیان ۱ از ما درود
دهد

Ինքն իրեն ճանաչող մարդկանց
մեզինից ողջուն մատուցելու

Ամենայն մարդ սր դիմէ զչափս
տնձին իւրոյ յինչն ողջոյն մա-
տուցէր (հմտ. խմբ. № 1)։

ارزانیان را از گنج ما خشنود
کنید

Արժանավորներին մեր գանձից
բավականութիւն պատճասելու

Արժանատւորացն ի յիմ գանձէն
բավին տուր (ընդ. խմբ., Ա. 2)։

²¹ Մոջրաա Մինովի, Թուրքիայի գանձարաններից, «Թեհրանի համալսարանի գրականութեան ֆակուլտետի հանդես», հ. 4, № 2, 1957, էջ 42—75։

²² Ժողովածուն Թեհրանում տպագրութեան է պատրաստել գրականագետ Ղոյամհոսեյն Սադիկին։ 1960 թ. մեր խնդրանքով պրոֆ. Մինովին ուղարկել է բնագրի տպագրական փորձաթերթերը, որի համար շնորհակալութիւն ենք հայտնում Նարգէլի պրոֆեսորին և հրատարակչին։

بیمند از ید پس بموید

Չափեցեք և աղա կտրեցեք:

Զամեն բան և զկտաւն տասն չափեցէք և աղա կտրեցէք (Բ—3):

կրատներ

2. ناکفتنی مگو یید

Ինչ չպիտի ասել՝ մի ասեք:

Խօսք որ տակոյ չէ՝ մի ասէք (ժե—1):

3. ناکستنی مگو یید

Անդամանկին մի փնտրեք:

Զանդամանկին մի փնտռեք (Ա—3):

9. راز خویش پیش هرکس

مگو یید

Ձեր զաղտնիքը ամեն մարդու մոտ մի ասեք:

Զձեր խորհուրդն մարդկաց մի ասէք (Բ—8):

22. کار زمستان بتابستان

بموزید

Զմռան զործք ամառը արեք:

Զմռան ար|գ|ազն ամառն հոգացէք (ժԲ—1):

92. نان خویش بخوان کسان

مگو یید

Ձեր հացը ալոց սեղանի վրա մի կերեք:

Զձեր հացն յալոց սեղան մի դրե՛նէք (Թ—1):

3. $L^1 \approx$ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի ձևադրատան $C-112$ ժողովածուի էջ 232—240-ում պահպանված կան նուշիրվանի 93 խրատներ: Ժողովածուն հեջրի 1060 թ. (1628) գրչությունն է: Խրատները ամփոփված են հետևյալ վերնագրի տակ՝ *بیمندنامہ انوشیروان عادل* («Անուշիրվան Ադելի խրատականը ըստ անցյալի իմաստունների»): Խրատների այս խմբագրության մի տարբերակը կա նաև Տաշքենտի արևելագիտության ինստիտուտի ձևադրատանը՝ № 5255 ($\approx T$), որի տարբերակումները նպաստում են սրբագրելու լենինգրադյան օրինակի որոշ ոչ հստակ տեղեր: Այս խմբագրությունը նախորդ երկու խմբագրությունների համեմատությամբ ունի փոքրիկ առաջաբան, որտեղ խոսվում է խրատականի ստեղծման շարժառիթների մասին, իսկ խրատները խմբավորված են հեքմաթ—

«Իմաստություն» անվանված 23 բաժիններում, յուրաքանչյուր բաժնում 3—10 խրատ: Խրատների այս օրինակը, շնայած առանձին հատվածների խիստ խմբագրված լինելուն և հերթական կարգի թեթև խախտման (համարակալումը մերն է—Բ. Չ.), հայերեն թարգմանության հետ շատ ընդհանրություններ ունի: Այսպես, օրինակ՝

ԺՁ Իմաստություն

بگفت هرکس ایمن میباشد

1. Ամեն մարդու խոսքին մի փոստահար:

سخن نيك از همه کس بشنويد

2. Բարի խոսքը բոլոր մարդկանցից լսեք:

براسته دروغ نسوگند مخوريد

3. Ճշմարիտ ու սուտ մի երդվեք:

آخرت را از دنیا دوستداريد

4. Հանդերձյալ կյանքը աշխարհից ավելի սիրեք:

ԺՁ բարի

1. Ամենայն մարդոյ խօսք մի փոստահար:

2. Զբարի խօսքն յամենայն մարդոյ ընդունեցէք:

3. Ոչ ճշմարիտ և ոչ սուտ ամենին մի երդնուք:

4. Զայն կեանքն ընդ կեանս մի փոխէք:

4. $L^2 \approx$ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատանը պահվում է մի փոքրիկ գրչադիր մատյան՝ A—82, բաղկացած 22 թերթից, որը կրում է «Նուշուլանի թաղի ատամնաշարի խրատականը» (کنگره نوشروان) խորագիրը: Գրչության տեղն ու ժամանակը հայտնի չեն: Խրատների իմաստը այստեղ վերարտադրված է չափածո՝ յուրաքանչյուր խրատ առանձին բեյթով: Ըստ այս աղբյուրի նուշիրվանի թաղը 23 ատամ է ունեցել, իսկ ամեն մի ատամի վրա 10 խրատ է եղել, ընդամենը 230 խրատ: Սրանց մեծագույն մասը, բովանդակության և հերթական կարգի թեթև խախտումով (համարակալումը մերն է—Բ. Չ.) համընկնում է հայկական թարգմանությանը: Օրինակի համար բերենք երկրորդ քոնդորեի (ատամի) և հայկական տարբերակի երկրորդ թարիլի մի քանի խրատների համեմատությունը.

Երկրորդ բաճառը

Երկրորդ բաճառը

نکه کن ز پیش و پیسی کار خودیش
همه کارها کن بمقدار خودیش
2. Նայիր գործիդ սկզբին ու ավարտին,
Բոլոր գործերդ կատարիր քոտ քո
կարողս խյան:

1. Ի բանին սկիզբն և ի կա-
տարումն հայեցարուք:

بکاری که خواهی تواندر شدن
نکه کرد باید بجهن آمدن
3. Թե կամենաս ինչ որ գործի մեջ
մտնել,
Պիտ անպայման ելրի մասին էլ
խորհել:

2. Յամէն բան որ մտանէք
յառաջ զիյն իմացէք:

گوا کزمودی از و در کذر
مکن آزمایشی مورا ذکر
5. Ում որ փորձել ես նրանից ձեռք
քաշիր,
Երբեք նրան նորից մի փորձիր:

4. Զփորձածն մի փորձէր:

مده آزموده بنا آزموده
که با آزموده نباید فنود

6. Մի տուր (մի փոխանակիր) փորձ-
վածը անփորձին,
Որովհետեւ փորձվածի մեջ ոչինչ
չախտի ավելացնել:

5. Զփորձածն յանփորձն մի
տայր:

Զփորձեալն ընդ անփորձին
մի փոխանակէք (հմտո.
խմբ. 10):

5. D¹=Նուշիրվանի խրատների մի այլ խմբագրություն
ուպահանված է Տաջիկական ՍՍՌ գիտությունների ակադե-
միայի արևելագիտական բաժնի ձեռագրատան № 338 գրչա-
զիր մատյանում՝ էջ 385Ծ—390a: Այս ձեռագիրը հեջրի 1064 թ.
(1653—1654) գրություն է, գրված Բուխարայում: Խրատա-
կանը, որը ընդամենը 92 խրատ ունի, այս աղբյուրում բերված
է «Անուշիրվան Աղելի դամբարանի հեքիաթը» (حکایت احمد)
انوشیروان عادل խորագրով զրույցի մեջ: Խրատները խմբա-
վորված են ինը բաժնում, յուրաքանչյուր բաժնում անհավա-
սար քանակի խրատներով: Սրա տարբերակներից է նույն ձե-

ոսպրատան № 247 զրչազիր մատյանի համանուն վերնագրով նուշիրվանի խրատականը (=D²), ընդամենը 94 խրատ: Այս խմբագրության և հայկական թարգմանություն միջև նույնպես ընդհանրություններ կան: Այսպես.

«Խմբարանի ներխաբ»

کاد کا دکان فمادند

Ա. 3. Գործերը բանիմաց մարդկանց կհանձնարարեն:

د کاد کا دکان فمادند

Ա. 7. Գործերի մեջ սկիզբն ու ավարտը նկատի առնել:

د کاد کا دکان فمادند

Ա. 8. Մի տեղ սր մտնելը դուրս գալու և գին տեսնել:

د کاد کا دکان فمادند

Ք. 1. Կտրածի, թափվածի, զոգացվածի ու այլվածի համար մի տրամեր:

د کاد کا دکان فمادند

Ք. 16. Անտաղ մարդկանցից տղջիկ մի աղեր:

د کاد کا دکان فمادند

և 6. Ընթերցանից հետոյ միտյն լավ խոսեր:

«Երաժիշտի»

Ա. 8. Զրանն բանդէտ մարդկաց զիր:

Բ. 1. Ի բանին սկիզբն և ի կատարու ձև հայեցարար:

Բ. 2. Ընտելն բան սր մտանելը յատաջ գին իմացել:

Ք. 9. Ընդ կտրածն, ընդ զեացածն, ընդ այրածն, ընդ վայջածն մի տրամեր:

Է. 10. Անտաղ մարդկաց կին մի աղեր:

Ժ. 9. Վտան մարդկան բան գրաւին ալ իրք մի տես:

6. H=Միջնադարյան սլաւոնիկ սլաւոնագիր Համոզովա հ Մոսթովին իր «Ընտրյալ սլաւոնության» (գրված 830/1329—1330 թ.) շարքորդ, Սասանյանների բաժնում հոստով Ա. Նուշիրվանին վերագրվող 118 խրատ է բերում, որոնց հիմնական մասը հերթական կարգի մեծ խախտումներով համընկնում է հայկական թարգմանությանը: Այսպես.

«Բնորյալ պատմաբան»

«Երասր Նուշիրսանի»

۱- کار بکار دان سپارد

Գործը բանիմաց մարդու
ճանձնարարեք:

Զրանն բանգետ մարդկաց
գիր (Ս. 8):

۳- طعام و شراب ننوشتا معبود

Կերակուրն ու բմակիրքը մենակ
մի կերեք ու խմեք:

Զուտեին ու գլխեին
մէն մի սիրէք (Բ. 6):

۱۰ کار امروز را قضا میفکنید

Այսօրվա գործը վազվան մի գցեք:

Զալա տաւր բանն ի
վազն մի ձգէք (Ժ. 2):

۲۲- از مردم کینه‌ور بتر سید

Ոխակալ մարդկանցից վախեցեք:

Ի յոխակալ մարդկաց
ի գտտ կացէք (Ժ. 1):

۸۶- در شورستان تخم مکارید

Այստ փայտմ սերմ մի ցանեք:

Յաղահատ անդիր սերմն
մի ցանէք (Է. 1):

۱۰۲- چنگ کسان باخود

مکینید

Այլոց կտիվ ձեր վրա մի վերցնեք:

Զայլոց կտիւ ձեր
անձինդ մի տանուք (Դ. 10):

۱۰۴- از پادشاه بر حذر باشید

Թագավորից երկյալ գ ունեցեք:

Առ թագաւորն պատրաստ
և ահարկու կացէք (Ժ. 1):

Նուշիրվանի խրատների արտացոլումը գեղարվեստական գրականության մեջ: Պարսկա-տաջիկական գրականության մեջ առաջինը, ինչպես նշվեց վերը, Ֆիրդուսին է օգտվում Նուշիրվանի խրատներից: Կարևոր է նշել, որ թե՛ Ֆիրդուսին և թե՛ հետագա այն գրողները, որոնք դիմել են Նուշիրվանի խրատներին, զրանցից բաղել են ավելի շատ ժողովրդական բնույթի խորհուրդներ, ըստ երևույթին առաջնորդվելով մի

* حمدالله مستوفی قزوینی، تاریخ گزیده، سعی و اهتمام ادوارد
۱۱۵—۱۲۰ ص ۱۹۱۰ ۱۳۲۸، لندن، بیرون (Համգոյլա Մոսթաֆի Կազվինի,
«Բնորյալ պատմաբան»-ը, աշխատասիրութեամբ Էդուարդ Բրաունի,
Լոնդոն, 1328/1910, էջ 115—120):

կողմից այն բարի ցանկութեամբ, որ իշխողները իրենց ստորագրյալների նկատմամբ մեղմացնեն կամայականութունները, իսկ մյուս կողմից՝ որպեսզի աշխատավոր խավերը կարողանան կողմնորոշվել իշխող սոցիալ-քաղաքական ծանր պայմաններում:

«Շահնամեի» նուշիրվանի թագավորության բաժնում Ֆիրդուսին տասնյակ էջեր է նվիրել պանծացնելու իր հերոսին, գովերգելու նրա «տիեզերահուշակ» իմաստութունն ու արդարագատությունը: Այս բաժնում ահա չափաժող մեջ են բերված բաղմամբով խրատներ, որոնք տարբեր առիթներով արքան տալիս է իր ստորագրյալներին ու թագաժառանգ Որմիզդին: Յուրաքանչյուր խրատ «Շահնամեում» տրված է մի բեյթով, ըստ որում Ֆիրդուսին խրատը այնպիսի վարպետությամբ է հյուսում իր ստեղծագործությանը, որ որևիցե չափով չի խաթարվում խրատի բուն էությունը, ընդհակառակը, ավելի խորիմաստ է դառնում և գեղարվեստորեն ավելի դյուրընկալելի: Բավարարվենք մի քանի օրինակներով.

«Շահնամե»²³

«Խրատը՝ Նուշիրուանի»

էջ 551 *دو ارزانیان گنج بسته مدار
ببخشای دو مرد پرهیزکار*

Արժանավորների համար զանձ մի խրատ
նայիր,

Արժանատիքացն ի յիմ դանձն
բաժին տուք (Ա—2):

Եվ (զանձ) նվիրիր չափավոր մարդկանց:

էջ 529 *مبادا که باشی تو پیمان شکن
که خاکست پیمان شکن را کفن*

Չլինի քեզի դու պայմանագրաց լինես,
Որովհետեւ հողն է պատանը պայմանագրանցի:

Զերդու մե և պայմանն մի կու-
խէք (ԺԲ—8):

էջ 555 *و زایدون که دشمن شود دوستدار
بشوره زمین تخم نیکی مکار*

Թե որ թշնամին թարեկամ էլ դառնա,

²³ «Շահնամե», հ. 4, 1933, Թեհրան, Բերում ենք բեյթը (երկտողը) բառացի թարգմանությամբ՝ ընդգծելով հետաքրքրող հատվածը:

Աղուտ գեանում բարուրյան սերմն մի
ցանիր:

ՀՋ 551 هجرتمند را شاد و نزدیک دار
جستان بود اندیش تازیک دار

Խմաստունին ուրախ և բեզ մոտիկ
պանիր,

Աշխարհը չարամիտին խավար դարձ-
րու:

Յադահատ տեղիք սերմն մի
ցանէք (Է 1):

Խմաստունքն քանի հեռի են,
աս խրեանքն մոտեցուր
(ԺԴ—3):

Մյուս հեղինակը, որ նույնպես օգտվել է Նուշիրվանի խրատներից, Օնսոր ալ-Մալի Քեյ-Քավուն է (XI դար): Նրա հայտնի «Կաբուսնամեի» ութերորդ գլուխը ամբողջովին նվիրված է Նուշիրվանի խրատներին: Այստեղ խրատները վերաշարադրված են արձակ, ավելի մեկնողական բնույթի են և շատ են հեռու բուն խրատներից, անգամ կան այնպիսիք, որոնք հավանաբար ուրիշ խրատականներից են քաղված և վերագրված Նուշիրվանին: Հեղինակը լինելով ժամանակի իշխող դասերի կարկառուն ներկայացուցիչներից, հիմնականում առաջնորդվել է երկրի համար իշխողներ դաստիարակելու նպատակներով, ուստի և ուսուցողական նկատառումներով օգտագործել է նաև Նուշիրվանի այս բնույթի խրատները: Այսպես.

«Կաբուսնամե»²⁴

«Սրտոք Նուշիրվանի»

اگر خواهی که تورا دواند وار
نشمنه. ند آنچه دایا فتی بود معوی

Եթե ուզում ես, որ քեզ իենթ չհա-
մարեն, ինչ որ անդտանելի է մի
փնտրիր:

Ձանդտանելին մի փնտռէք
(ԼԷ—3):

²⁴ منتخب قابو سنامه، باهتمام آقای سعید نفیسی، تهران، ۱۳۲۰، ص ۵۷—۵۸ (Կաբուսնամեի հատընտիր, Սաիդ Նաֆիսու լրացումներով, Թեհրան, 1320/1941 թ., էջ 57—62): Տե՛ս նաև «Кабуснаме. Перевод, статья и примечания чл. корр. АН СССР Б. Э. Бергельса, 2-е изд. Изд. восточной литературы, Москва, 1958, стр 85—88.

هرکد روزگار او ۱۰ دانا نکند در 60
آمدنش او هیچ کس را رنج نماید ببرد

Ումոր ժամանակը իմաստուն չգարձ- Արլահ մարդուն ու խումարին
նի, ոչ ոք նեղություն չպիտի ու հարրածին խրատ մի տաք
կրի նրան կրթելու: (Է-2):

Հետագա դարերում շատ գրողներ, ինչպես Նասեր Խոս-
րովը, Նիզամին, Սաադին, Շեյխ Աթթարը և ուրիշներ, իրենց
ստեղծագործություններում, ի թիվս բազմաթիվ այլ խրատնե-
րի, օգտագործել են նաև այս հուշաբանի առանձին խրատ-
ները: Նրանց մշակումները խորիմաստ են ու ղեղարվեստա-
կան մեծ քնդհանրացման հասցված, միաժամանակ այնքան
պարզ ու դյուրընկալելի, որ պարսկախոս շատ ժողովուրդների
մեջ ներկայումս ավելի շատ այս խրատ-երկոտղերն են տա-
րածված, քան Նուշիրվանի բուն խրատները: Հիշենք Սաադու
հետևյալ տողերը.

چه گویم که ناگفتم بپشتر است
زبان در دهان پاسبان سراسر است
Ինչ ասեմ, որ չասելի ավելի լավ է,
Լեզուն բերանում գլխի պահապանն է:

مکن تکیه بدستگاهی که هست
که باشد که نعمت نماید بدست
Մի ապավինիր քո ունեցվածքին,
Քանզի հարստությունն անգամ կարող է
ձեռքում չմնալ:

Սրանք համազոր են Նուշիրվանի հետևյալ խորհուրդներին.

سلامتی تن اندر نگاه داشتن زبان دانید 1.1(3-4)

Մարմնի ապահովությունը լեզուն
պահելու մեջ իմացեք:

4-6. Զձեր անհոգի թիւն ի լեզուդ
պատրաստելոյն իմացեք:

بدولت و نعمت دنیا تکیه مکنید 1.1(3-4)

Աշխարհի հարստությունն ու կարողությունը
մի ապավինեք:

Նուշիրվանի խրատների արձագանքներն ենք գտնում նաև Շեյխ Աթթարի մոտ: Բավարարվենք հետևյալ օրինակներով.

کسرا کازمودی چند باشد
کن زیند—، دگر ازموش

Մեկին որ մի քանի անգամ փորձեցիր,
Զգույշ եղիր կրկին չփորձես.

որի համազորը Նուշիրվանի խրատականում հետևյալն է.

Բ—4. Զփորձածն մի փորձէք:

Կամ՝ Նասեր խոսքովը ասում է.

زده کیمس ممکن هرگز درم وام
که رستمائی و حنک آرد سبب انجام

Նորոսակ մարգույց երբեք զրամ պարտք մի արա,
Որը ի վերջո խայտառակություն և կոխով կրերի:

Նուշիրվանի մոտ սրա համազորն է՝

Է—4. Փոխ ի նորոսակ մարգույց մի առնէք:

Նուշիրվանի հայերեն խրատները քաղցմանված են պարսկերենից: Նուշիրվանի քննության առարկա խրատները՝ միջնադարում թարգմանվելով հայերենի, մեծ տարածում են գտել և Սողոմոն իմաստունի, Արիստոտելի, Եվնիկ Կողբացու, Խիկարի և բազմաթիվ այլ խրատականների հետ միասին հաճախակի ընդօրինակվել են մեր ձեռագրերում: Նման ժողովրդականությունը բացատրվում է առաջին հերթին Նուշիրվանի խրատների բնույթով, որը հիմնականում աշխարհիկ լինելով, բավարարել է ժամանակի հասարակական կյանքի պահանջները, և համընկել նրա բարոյական սկզբունքներին: Խրատների տարածմանը նպաստել են նաև նրանց լեզվի պարզությունն ու մատչելիությունը, չափազանց սեղմ ու համառոտ, բայց միևնույն ժամանակ խորն ու ընդհանրացնող, դիպուկ կերպով ասված միտքը: Այս բոլոր առանձնահատկությունները Նուշիրվանի հայերեն խրատները դարձրել են միջնադարի հայ արձակի ամենագեղեցիկ նմուշներից մեկը:

Ֆիրդուսու ծննդյան հաղարամյակի կապակցությամբ «Հանդէս ամսօրեան» հրապարակել էր Ա. Սարուխանի «Ֆիր-

դուսին և Մ. Խորենացին» խորագիրը կրող ուսումնասիրությունը²⁵, որտեղ հեղինակը՝ քննելով հայ-իրանական գրական-բանահյուսական մի շարք տղերաներ, ի միջի այլոց ուշագրություն էր հրավիրում «Շահնամեն» ֆրանսերեն թարգմանող հայտնի իրանագետ Մուլի հետևյալ նկատողության վրա, թե «էջմիածնի մատենադարանին մեջ կերևա թե պահված են «Իմաստութիւն Նուշիրւանի» խորագրի տակ երկու հայերեն գրվածք. առոնք հավանորեն պահվով գրքերու թարգմանություններ են, որպիսիներ Ֆիրդուսին ունեցած է աչքի առաջ»:

Վաստակավոր բանասեր Ն. Ակինյանը, բաջածանոթ լինելով Նուշիրվանի խրատների հայերեն թարգմանությանը, առանց հապաղելու ուշագրության է առնում Սարուխանի հիշեցումը: Նա երկու ձեռագրերի համեմատությամբ հրատարակում է այդ խրատները և, քննություն առնելով դրանց թարգմանության հարցը, հանգում է հետևյալ եզրակացություններին²⁶.

ա. Նուշիրվանի խրատները թարգմանված են ո՛չ թե պահվելներնից, ինչպես ենթադրել է Մուլը, այլ արաբերենից.

բ. Թարգմանությունը կատարված է XIII դարում, թերևս Առաքել Անեցու և ընկերների ձեռքով:

Ն. Ակինյանը հայկական ձեռագրերում այս խրատների ընդարձակ և համառոտ խմբագրություններ է նշել և, հիմք ընդունելով Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 791 ձեռագրի ընդարձակ օրինակը, գրված ԺԶ դարում Վարդան Ղարաավեցի երեցի ձեռքով, հրատարակել է դրանք՝ միաժամանակ առանձնացնելով համառոտ խմբագրության այն խրատները, որոնք բացակայում են ընդարձակի մեջ:

Ն. Ակինյանը հիշատակում է Նուշիրվանի խրատները պայտնակող իրեն ծանոթ 2 ձեռագիր Վիեննայում (№ 791, ԺԶ դար—ընդարձակ խմբ., № 988, 1697 թ.—համառոտ խմբ.),

²⁵ «Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 1—24, 175—185:

²⁶ Տե՛ս Ն. Ակինյան, Խրատք Անուշիրուան (Նուշիրվան) թագաւորին, «Հանդէս ամսօրեայ» 1935, էջ 97—112: Տե՛ս նաև Ն. Ակինյան, Մատենադրական հետազոտություններ, հ. Դ, Վիեննա, 1938, էջ 143—169:

մեկ ձեռագիր Վենետիկում (№ 263, 1628 թ.²⁷ — ընդ. խմբ.), մեկ ձեռագիր Երևանի թանգարանում (№ 822, 1672 թ. — հմտ. խմբ.: Տե՛ս ներկայումս Մաշտոցյան մատենադարանի № 7993—Բ. Զ.), 2 ձեռագիր էջմիածնի թանգարանում (№ 126, ԺԸ դար, № 195, ԺԷ դար — հմտ. խմբ.: Տես ներկայումս Մաշտոցյան մատենադարանի № 126 և № 7875—Բ. Զ.) և այլ ձեռագրեր Երուսաղեմում:

Նուշիրվանի խրատները պարունակող ձեռագրերի թիվը շատ ավելի է, քան նշել է Ալիինյանը. միայն Մաշտոցյան մատենադարանում պահպանվում է 26 ընդօրինակություն. պետք է հիշել նաև մեկական ձեռագրեր Բրիտանական թանգարանում²⁸, Թավրիզում²⁹, Զմմառի վանքի մատենադարանում³⁰ և Քյուրտյան հավաքածույի մի տաղարանում³¹:

Ընդարձակ խմբագրություն է պատկանում նաև ձեռագրերի այն խումբը, որի համար հիմք են հանդիսացել «Գիրք պատմութեան վասն Պղնձե քաղաքի» հրատարակության մեջ գոյություն ունեցող Նուշիրվանի խրատները կամ նրանց նախագաղափար օրինակը:

Զմմառի ձեռագրացուցակից իմանում ենք, որ Նուշիրվանի քննության առարկա խրատները հայերենից թարգմանվել են թուրքերենի (հայատառ) (տե՛ս սույն գրքի «Բնագրեր» բաժինը):

²⁷ Ն. Ալիինյանը այս ձեռագրից համեմատության է առել միայն տուաջին երեք տողերը և վերջավորությունը: Հարգելի Մխիթարյան հ. վ. Հովհաննիսյանը մեր խնդրանքով ուղարկել է այս տարբերակի ընդօրինակությունը, որ ամբողջությամբ օգտագործված է բնագրերի բաժնում V համառոտագրությամբ: Վենետիկի № 263 Ոսկեփորիկը ներկայումս կրում է № 1541: Հայտնում ենք մեր խորին շնորհակալությունները հ. վ. Հովհաննիսյանին:

²⁸ F. C. Conybeare, A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, 1913, p. 227.

²⁹ Հ. Անադյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա, 1910, էջ 88:

³⁰ Քեչիշյան Մ., Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի, Վիեննա, 1964, էջ 348:

³¹ Հարգելի րանասեր Հ. Քյուրաշյանը իր հավաքածույի այս ընդօրինակությունը սիրով ուղարկել է մեզ, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Հայերեն թարգմանության բնագրերի ուսումնասիրությունը բացահայտում է մի քանի դար շարունակ արտագրված այս խրատների մեջ կատարված փոփոխությունները, ցայտուն դարձնում տարբեր գրիչների միջամտությունները՝ նրանց հավելումներն ու կրճատումները, ժամանակի պահանջով կատարված սրբագրումները: Այսպես, XVI դարի ընդօրինակություն հանդիսացող Վիեննայի № 791 ($\approx A$) ձեռագրի խրատներից մեկում ասված է՝ «Ի մէջ այր և կնոջ, ծառայի և աղատի շառ մի ձգէք»։ Հետագա արտագրություններում խրատի ազատ բանը փոխարինվել է պարոն-ով՝ ըստ երևույթին աղատ հասկացության, որ պարսիկերեն տարբերակներում ևս կա, ժամանակի համար ոչ բնորոշ լինելու հետեանքով (տե՛ս Ժ—6 խրատի տարբերակները): D ձեռագրում ամենուրեք պարոն-ով են փոխարինված քաղալոր և իշխանալոր բառերը: Կամ նույն A ձեռագրում ասված է «Ձօր և մօր հարկիքն մեծ տեսէք» (ԺԲ—5), իսկ BEI ձեռագրերը, որոնք XVII դարից հետո են ընդօրինակվել, ունեն «և աղզ» հավելումը («Ձօր ու զմօր և զաղզի հարկիքն մեծ տեսէք»): A ձեռագրի ԻԲ—4 խրատում ասված է՝ «Յառատութեան ժամն զսղութիւն յիշեցէք»։ սավաղվա անապահով կյանքի վկայությունն է, բայց F ձեռագրի խմբագրողը խրատը խմբագրել է հետևյալ կերպ՝ «Առատութիւն և զսղութիւն յիշեցէք»:

Հ. Ն. Ակինյանը բաղդատելով խնդրո առարկա խրատների ընդարձակ և համառոտ խմբագրությունները, հետևյալ եզրակացության է հանգում. «Այս Ծաղկաբաղը (իմ համառոտ խմբ.—Բ. Զ.) թեպետ շատ տեղեր կը խոտորի ընդարձակեն, բայց առանց տարակուսի քաղված է անկե: Անծանոթ խմբագիրը առանձին փուլի տարած է ընդարձակին ռամկաբանությունները գրական լեզվի վերածել և անոր մոլթ տեղիքները յուսաբանել... Համառոտ Ծաղկաբաղին մեջ կը տեսնվին վճիռներ ալ, որոնք կը պակսին ընդարձակին: Այսպիսիները ուրիշ աղբյուրե առնված են, թե փոփոխակներն են ընդարձակին և կամ անկե դուրս ինկած մասերն են: Թե խմբագիրը

«տար աղբյուրե ալ վճիռներ մուծած է յուր Ծաղկաքաղին մեջ անուրանալի է... Կը կարծեմ սակայն թե Ծաղկաքաղին ինչ ինչ վճիռներ, որոնք կը պակսին այժմ Ընդարձակին մեջ, նախ-նաբար անոր մասերն եղած ըլլան» («Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 100—101):

Հ. Ն. Ակինյանը հիրավի ճիշտ է նկատել ընդարձակ և համառոտ խմբագրութիւնների տարբերութիւնները: Պետք է նշել, որ մեր ձեռքի տակ եղած խրատների բաղմամբիւ ընդօրինակութիւնները հնարավորութիւն ընձեռեցին ընդարձակի քննական բնագիրը կազմելիս որոշ «մութ տեղիքները» լուսաբանել, իսկ որոշներն էլ ավելի հստակվեցին պարսկերեն ընդօրինակութիւնների հետ հայերենը բաղդատելիս: Այսպէս օրինակ՝ Զ—4 խրատում ասված է. «Ի պիղծ և յանպատեհ թաղուց ի զատ կացէք»: Մեր օգտագործած D և F ձեռագրերը ավելացնում են նաև «ի պեղծ դրացիներու», իսկ համառոտ խմբագրութիւնը ունի «Ի շար դրացեաց հեռաբնակ կացէք» (խրատ № 20): Պարսկերեն L¹ և L² օրինակները բաղբեր չունեն, այլ միայն՝ դրացի. از همسایه بد پرهیز کنید: «Վաստ դրացուց խուսափեք» (L¹, Զ—1):

A ձեռ. Ը—6-ում ասված է «Զուտելն և զխմելն մի սիրէք», K ձեռագիրը ունի «Զուտելն և զխմելն մէն (FIV միայն, P միևակ) մի սիրէք», իսկ համառոտ խմբագրութիւնը՝ «Զկերակուրս և զըմպելիս առանձնաբար մի ընթրիք» (խրատ 74) վերջինս բառացի համընկնում է պարսկ. H ձեռագրի 4-րդ խրատին. طعام و شراب تنگنامه خورید «Կերակուրը և ըմպելիքը մենակ մի կերեք ու խմեք»:

Համառոտ խմբագրութեան «Զձեղ ի մանկութենէ բարի անուամբ հռչակեցուցէք» (խրատ № 8) խորհուրդը ընդարձակը չունի, մինչդեռ պարսկ. L² տարբերակը ունի համանման մի խորհուրդ. چاکه جوانی بماند یک نام «Երիտասարդ ժամանակ բարի անունով մնա» (L², Բ—9):

Ընդարձակը չունի նաև համառոտի № 14 խրատը. «Ի շաքանուն տեղուք մի բնակիք», մինչդեռ պարսկ. L² տարբերա-

կում կա նման մի խորհուրդ. *باید نام باشد معوی*
«Վատանուն տեղում մի թափառիր» (L^2 , Ե—10):

Այս օրինակները բավական են ապացուցելու, որ համա-
ռոտ խմբագրության կազմողը ձեռքի տակ է ունեցել Նուշիր-
վանի խրատների կամ հայերեն թարգմանության մեղ անհայտ
մի այլ ընդօրինակություն և կամ, ամենայն հավանականու-
թյամբ, ինչ-որ պարսկերեն մի օրինակ, որի հիման վրա կա-
տարել է իր հավելումներն ու սրբագրումները:

Ձեռքի տակ ունենալով վերը թվարկված պարսկերեն ալ-
բյուրները և Նուշիրվանի հայերեն խրատների ավելի քան 26
ընդօրինակություն, մենք ձեռնամուխ եղանք սրանց համեմա-
տության: Այս նպատակով նախապես կազմեցինք Ընդարձակ
և Համառոտ խմբագրությունների քննական բնագրերը՝
առանձնացնելով միաժամանակ զրիչների առանձին միջա-
մտություններն ու հավելումները: Կատարված մանրակրկիտ
համեմատությունը, ինչպես նաև լեզվա-ոճական բաղաձայնի
ընդհանրությունները մեզ իրավունք են տալիս եզրակացնե-
լու, որ հայերեն խրատները թարգմանված
են ոչ թե արաբերենից, ինչպես կարծում
է Ն. Ա. Կինյանը, այլ պարսկերենից:

Որո՞նք են մեր այս եզրակացության կոլանները.

1. Ն. Ա. Կինյանը Նուշիրվանի հայերեն խրատները թարգ-
մանված է համարում արաբերենից՝ հիմք ընդունելով գլխա-
վորապես հայերեն բնագրի մեջ գտնվող արաբերեն փոխառ-
յալ բառերը: «Արաբերեն սկզբնագրի մը հետքերը, — գրում է
Ն. Ա. Կինյանը, — հայերեն թարգմանության մեջ զգալի են: Կան
բաղաձայնի արաբերեն բառեր, որոնք նույնությամբ փոխ
առնված են թարգմանչեն»³²: Ն. Ա. Կինյանի բերած 14 օտար
բառից երկուսը պարսկերեն են՝ դարպաս և ապրահ «ջրմուղ,
ջրանցք»: Առաջինը հին պարսկերեն է և վաղուց է վկայված
մեր գրականության մեջ (տե՛ս Հ. Աճառյան, Արմատական
բառարան, Բ, էջ 444), երկրորդը նոր փոխառություն է, իսկ

³² «Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 101:

12-ր արաբերեն են: Այստեղ հարգելի բանասերը հաշվի չի առել, որ այդ արաբերեն բառերը միաժամանակ պարսկերենի բառապաշարի հարադատ տարրն են կազմում. դրանք շատ վաղուց փոխ են առնվել արաբերենից և դարերի ընթացքում մերվել պարսկերենին՝ դառնալով նրա անքակտելի մասը: Վերջինը թվարկված պարսկերեն խրատականներում այդ բառերը նույնպես գոյություն ունեն. այսպես. Ը թարիկի 2-րդ խրատի սրլան «տղետ, հիմար» բառը պարսկերեն համազոր խրատներում նույնպես օգտագործված է.

R — 16 **دیده اند را و آیدند پند مدهید**
 ինքնին և արվանին խրատ մի տվեք:

دیده اند را و آیدند پند مدهید
 مدهید پند کین هر سه را نیست
 سو 3—2, 1

Արվանին, հարրածին ու խենթին
 խրատ մի տուր՝ երեքից էլ չի բ
 օգուտ:

آیدند و آیدند پند مدهید
 کنید و آیدند پند مدهید 2—1, 1

Արվանից, հարրածից և խենթից խոտ
 տափեցեք և նրանց խրատ մի տր
 վեք:

Եազուր (یاقوت) (այլ ձևադրերում ազուր) «հակինթ».

یکی تاج فمود کوه نکار

R, W տաք **در و یاقوت بود نکار**
 Հրամայեց զոհարակերտ թագ պատ
 րասել,

Վրան մարգարիտ ու եազուր գոր
 ծածկ:

یکی تاج بودش عجب شاهور...
 مکمل بی قوت و در یکسره

Արքայազնի մի թագ ու ներ...
 Ամբողջությամբ պատած եազուրով
 ու մարգարտով...

«Արվան մարդուն ու խուժա
 րին ու հարրածին խրատ մի
 տաք» (Ը—2):

«Տգիտաց և զիահարաց և
 արբեցողաց խրատ մի տաք»
 (Հմտ. խմբ. 71):

«Եւ էր գրած եազուր աղամբ»
 (W տաք. 8. 9):

Թրղրիւր (تدبير) «խորհարգ, կարգ, միջոցառում»:

R 50 بتدبير كه دكان كا مكنيد

երեխաների քրդերով գործ մի արեք:

1.2, Խ 9 مكن هيچ تدبير با كه دكان

اگر چند باشند از زييركان

Երբեք երեխաների հետ քրդերի մի
արա. թեկուզ և նրանք խելացի
լինեն:

با كه دكان و زنان تدبير مكنيد

1.1, Թ 3

երեխաների և կանանց հետ քրդերի
մի արեք:

«Ի տղայոց քրդերի մի առ-
նուք» (Թ 3):

«Ընդ մանկունս խորհուրդ մի
առնէք» (Հմտ. խմբ. 25):

Ն. Ակինյանը արաբերենն է համարել նաև քարկ բառը՝ տա-
լով طريق (tarik) արաբերեն տառադարձությունը, «ճանա-
պարհ, ուղի, անցք» նշանակությամբ:

Հ. Աճառյանը «Արմատական բառարանում» (հ. Բ, էջ 1155)
այս բառի հետեւյալ բացատրությունն է տալիս. «քարկ.
«աղամանդի երեսները». նորագյուտ բառ՝ որ երկու անգամ
գտնում եմ գործածված Առաք. պտմ. 461. Ալմաստն լեց թարկ
է. յոր կողմն շրջես երեք թարկ կու երեւնայ. նշանակում է նաև
«պարսկական գլխարկի երեսները կամ շերտերը». և այս
իմաստով գործածված է 1513 թվի մի հիշատակարանի մեջ՝
հրտ. REA I, էջ 96. «թարկս ունի ԺԲ» հմմտ. Հացունի. Պատ-
մություն տարազի, ուր էջ 279 ասում է. թե իրոք պարսկական
գլխարկը ունի 12 շերտ: Հացունի, անդ, էջ 278 դնում է պրսկ.
tark «սաղավարտ» բառից»:

Բառս իսկապես պարսկերենն է և ոչ մի կապ չունի արաբե-
րեն քարիկի հետ: Պրոֆ. Աճառյանն ու Հացունին ճիշտ են
մեկնել: Բայց ըստ երևույթին պրոֆ. Աճառյանը վերջնակա-
նապես համոզված չի եղել բառի ստուգաբանմանը և այն դա-
սել է անստույգ բառերի շարքում (բառի դիմաց ոչ մի նշան չի
օգտագործված): Նա քարկը չի մտցրել նաև իր «Հայոց լեզվի
պատմության» պարսկերենից կամ արաբերենից փոխառված

բառերի ցանկի մեջ: Նաֆիսու պարսկերենի բացատրական բառարանը քաբլի համար նույնպես վերոհիշյալ իմաստներն է տալիս: Ֆիրդուսին բառս «սաղավարտ» իմաստով է օգտագործել:

بقلب سماء آید و نوزاد یکی تکریمی دستور تهاد³³

Այս բառը արաբերենում չկա. մեզ հայտնի արաբերեն և ոչ մի բառարանում չենք գտել: Խրատների պարսկերեն տարբերակները քաբլի փոխարեն ունեն արաբերեն փոխառյալ کنگره (kongore) «պարսպի ատամներ» (L^2 էջ 1 և R մուտք): Հետեվաբար մենում է ենթադրել, որ հայերեն խրատների մեջ այս բառը կարող էր մուտք գործել միայն պարսկերեն հնագույն մի բնագրի առկայության դեպքում: Այդ բնագիրը չէր կարող պահպանվել լինել, որովհետև այդ դեպքում հայերեն թարգմանության մեջ չէին լինի արաբերեն բառերը: Արաբերեն բառերի գոյությունը պարսկական բնագրում ապացույց է, որ պարսկերենը թարգմանվել է արաբերենից, իսկ վերջինիս համար, ինչպես վերը ասվեց, հիմք է հանդիսացել ինչ-որ պահով բնագիր:

2. Նուշիրվանի խրատները պարսկերենից թարգմանված չլինելու մի այլ փաստարկը ևս հայերեն թարգմանության ընդարձակ խմբագրության առաջին թարկի առաջին խրատում թույլ տրված թարգմանական սխալն է, որը միայն հնարավոր էր պարսկերեն բնագրի առկայության դեպքում: «Խրատնամակը» (էջ 44) և R ձեռագիրը այս խրատի դիմաց ունեն *خودشتن شناسی را ز ما درود دهد* («Ինքն իրեն ճանաչող մարդուն մեզնից ողջուն մատուցեք»): Հայերեն ընդարձակ խմբագրությունը սրա դիմաց ունի «Ջանձնահաճ մարդն յիսն է ի զատ պահեցէք»:

Նաֆիսու բառարանը մեկնում է «Ինքնահավան, ինքնահաճ»: Բայց բառի ստուգաբանությունը տալիս է և «Ինքն իրեն ճանաչող» իմաստը: Այսպես է հասկացել նաև

³³ فردوسی، شاهنامه، جلد ۴، ص ۴۰۶ («Շահնամ», հ. 4, էջ 406)

Լենինգրադի պարսկ. C—112 ($\approx L^1$) տարբերակի գրիչը կամ խմբագիրը՝ հրատարակելով ձեռագրում հետևյալ խմբագրությունն ունի *خودبختان را بدستاسيد تا خدا*, *باشناسيد* «Ծանիր զքեզ, որպեսզի ճանաչես նաև աստծուն»: Հայերեն ընդարձակ խմբագրության թարգմանիչը բառս առաջին առումով («ինքնահավան, անձնահաճ») է հասկացել, բայց քանի որ խրատի երկրորդ մասը («ողջուն մատուցեր») անհարիր է եղել սկզբի մասին, ուստի նա հավանաբար *دور* (*dur*) «ողջուն» բառը վրիպակ է համարել և այն կարդացել է *دور* (*dur*) «հեռու, ի դատ» իմաստով, համանավանդ որ այս երկու բառերը պարսկերենում իրենց գրովթյամբ շատ նման են և հեշտությամբ կարելի է իրար հետ շփոթել: *دور* (*dur*) բառը մեր խրատականի մեջ մի այլ տեղ օգտագործված կա և հայերեն թարգմանվել է «ի դատ». այսպես.

هر کاری که زشتست یاروی خا
از او دور باش و رسیدی بکام
L², և 7

«Յանպատեհ բաներուն պատ-
րաստ և ի դատ կացեր»
(և—7):

Ինչ գործ որ հազրելի է ու ահա՛,
նրանից հեռու եղի՛ր և նպատակիդ
հիասնես:

از کارهای ناپسندیده دور باش
L¹, և 4

Տհաճ գործերից հեռու կաց:

Մինչդեռ հայերեն թարգմանություն համառոտ խմբագրության մեջ № 1 խրատը պարսկերեն բնագրին միանգամայն հարապատ է: Ընդհանրապես պետք է նշել, որ համառոտի մեջ նկատվում են խմբագրական ճշտումներ: Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ համառոտի խմբագրողը վերահասու է եղել ընդարձակի սխալ թարգմանությանը և այն ուղղել է հետևյալ կերպ. «Ամենայն մարդ որ գիտէ զչափս անձին իւրոյ յինէն ողջուն մատուցէր». բայց քանի որ ընդար-

ձալի տվյալ խրատը նույնպես իմաստնալի է, այն ևս թողել է իր համառոտած խրատականի մեջ:

3. Դ թարիկ № 2 խրատը հետևյալն է. «Զղենի ժամն լաւ գիտացիր քան զայլ ժամսն»:

Ն. Ակինյանը օտար բառերի շարքում զեն շի հիշատակում, ուստի և մենք կարծում ենք, որ նա այդ բառը «զոհ» իմաստով է ընկալել, նամանավանդ որ խրատը կարելի է դոհաբերման նպատակով էլ հասկանալ: Բայց իրականում դա պարսկերեն زيان (ziān — զեան) «վնաս» բառն է: Հայերենը այն փոխ է առել միջին պարսկերենից և վաղուց ավանդված կա մեր մատենագրության մեջ (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, էջ 729 և Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. Բ, էջ 932—933): Խրատիս պարսկերեն համազորները նույնությամբ օգտագործում են այդ բառը.

زبانی که — دهنه کاه آید بپیش
 ده از سود دان جز دهنه کاه خویش
 [2, Գ. 2.

«Զղենի ժամն լաւ գիտացիր
 քան զայլ ժամսն» (Դ—2):

ժամանակին եկած գիտնր (վնասոր)
 Ավելի լավ համարիր, քան անժամա-
 նակ օգուտը:

دان دهنه کاه، از سود
 دهنه کاه داند
 [1, Գ. 2

«Զլենի լաւ ժամն լաւ գիտա-
 ջիք քան զվատ զանժամ
 շահն» (Բ՝ ձեռ., Գ—2):

ժամանակին եկած գիտնր անժամա-
 նակ օգուտից ավելի լավ իմացեր:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ հայ թարգմանիչը ձեռքի տակ պարսկերեն բնագիր է ունեցել և հայերենի մեջ պահպանել է բնագրային զիան-զեան (զեն) բառը:

4. է թարիկ № 4 «Փոխ ի նորհալ մարդոյ մի առնուք» խրատի ընդգծված բառը պարսկերեն բառի հարադատ թարգմանությունն է: Քսակը հայերենում փոխառվել է պահլավերենից և ավանդված կա մեր հին մատենագրության մեջ, արաբերենը ունի کيس (kis) ձևը (տե՛ս Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. 6, էջ 1544): Սակայն նորհալ մեր բա-

պարաններում չկա և նորահայտ բառ է՝ պարսկերեն **دوکیس** (nokise) ձեռք, «հանկարծակի հարստացած մարդ» նշանակությամբ: Հայ թարգմանիչը պարսկերեն բառի դիմաց պատճենավորման կարգով դրել է նորհալ:

Այս խրատի պարսկերեն համազորը հետևյալն է.

مكن قاتلانى ز نوکيسه واد «Փոխ ի նորքակ մարդոյ մի
که اندر خصمت دمانى مد տանուք» (Է-4):

L², Է-3

Թե կարող ես նորքակից փոխ միտո,
Զի կմնաս թշնամութեան մեջ դու
հավետ:

L¹, Է-3 از نوکيسه درم واد مکنيد
նորքակից գրամ փոխ մի տանեք:

5. Հայերեն թարգմանության առանձին խրատների մեջ նկատվում է պարսկերենի շարահյուսական նույն կառուցվածքը, այսպես.

R-31 Jang kasān-rā bekhištan maxarid.

Դ-10. Կախ Զալլոց ձեր անձինդ մի առնուք:

Այստեղ maxarid «մի գնեք» բառի դիմաց թարգմանիչը նույնությամբ օգտագործել է հայերեն համազորը՝ մի առնու՛մ, մինչդեռ ավելի հարմար կլիներ՝ մի առնե՛լ:

R-40. Bihamrāh be rāh maravid

Զ-6. Անընկեր ի հանապարհ մի երթաք:

R-41. Dar zamine šore toxm makārid.

Է-1. Յաղահատ տեղիք սերմն մի ցանեք:

R-73. Begofār har kas imān mabāšid.

ԺԶ-1. Ամենայն մարդու խօսք մի վստահանալք:

R 90. Kārha betadbir konid.

ԺԲ-7. Զամենայն բան թըղբիրով արարեք: եվ ալին:

6. Հայերեն բոլոր տարբերակներում, բացի A ձևազրից, ամենուրեք խոսքով Ա արքայի նուշիրվան (նուշրուան, նուշրովան, նոյիշրվան, նշրուան և այլն) մականունն է օգտա-

գործված, որը պահպանվել էր anoshak-ruwan և արաբերենում՝ anosharwan «անմահ հոգի» ձևով է օգտագործված: Ֆիրդուսին այս մականունը օգտագործել է Nushiravan (Nushirvān) որից հետո այս ձևը պարսից գրականության մեջ դարձել է տիրապետող: Ըստ այդմ էլ մենք ամենուրեք օգտագործում ենք պարսկերենին ավելի մոտ նուշիրվան (քննական բնագրում՝ Նուշիրուան) ձևը. մեր ձևագրերը պահպանեն և այս տարադարձությունը շատ մոտ ձևեր: Խրատները արաբերենից թարգմանված լինելու դեպքում պետք է պահպանվեր այս անվան արաբական և ոչ թև պարսկական ձևը:

7. Ի վերջո մի կողմնակի փաստ էս. Երևանի Մատենադարանի 2291 ձևագիր ժողովածուն, գրված 1665 թ. Կեսարիայում Եփրեմ Տաթևացու կողմից, ունի մի քանի խրատականներ, այդ թվում և Նուշիրվանի խրատները (էջ 51բ—54բ): Սրան հաջորդում է «Խրատք իմաստասիրաց ասացեալ» (էջ 55ա—57ա), ապա մի այլ խրատական, որ կրում է «Ձայս ի պարսից գտի և գրեցի» վերնագիրը («Չորս ցեղ պատճառ կործանի թագաւորութեան...»):

Դոք. Մինովիի հայտնաբերած վերոհիշյալ «Խրատնամակ» պարսկերեն ժողովածուի մեջ կան մի խումբ խրատներ, որոնք բավական ընդհանրություններ ունեն այս «Չորս ցեղ պատճառ կործանի թագաւորութեան» շարքի հետ: Այսպես, օրինակ.

«Խրատնամակ»

Չորս բան է ուժեղացնում տեսողությունը. նախ՝ հաճելի կահաչք, [երկրորդ]՝ հոտուն ջուրը, երրորդ՝ վճիռ գինին և, չորրորդ՝ բարեկամի զեմքը տեսնելը:

Չորս բան է մարմինը զիրացնում. նախ փափուկ և բարակ հագուստ հագնելը, ապա՝ անուշ հոտեր հոտոտելը, երրորդ՝ մաքուր

Ձեռ. № 2281

Չորս իրք է, որ զմարդս տրբամտ թիւն տանի և դաշաց յայն գօրացնէ. նախ տեսնել զկանաչն, ք. նստիլ ի մօտ ջուրն, գ. տեսանել զերկնից լայն, գ. գաղէկ իրաց տեսն:

Չորս իրք է, որ զանձն զիրացնէ. նախ՝ ի յաղնիս մտնելն, ք. ոտակ տխորժ կերակուր, գ. հագնիլ փափուկ հանգերձ...

* Encyclopédie de l'Islam т. I, 1960, p. 538.

կենսալր, չորրորդ՝ ուսեկուց հետո
բնեկը³⁴:

Չորս իրք է, որ զհիւանդն ա-
սողջացնէ:... ր. անուշահոտ հո-
տոսեկը...³⁵:

«Չորս ցեղ...» խրատականի մի տարբերակը Մատենադա-
րանի № 2939 (ժամանակ՝ 1779—1799 թթ.) ձեռագրի հիման
վրա հրատարակված է «էջեր հայ միջնադարյան արձակից»
ժողովածուի մեջ³⁶: Ժողովածուն կազմողները ծանոթագրու-
թյուններում կարծիք են հայտնել, որ հավանաբար խրատների
այս շարքը գալիս է «Արիստոտելին վերագրված «Գաղտնի
զաղտնեաց» գրքից, որի հնագույն տեքստը համարվում է
արաբականը»³⁷: «Խրատնամակում» դրանք վերագրված են
Նուշիրվան արքայի իմաստուն վեզիր Բողարջումեհրին և ոչ
Արիստոտելին. «Խրատնամակում» այն վերնագրված է «Բո-
ղարջումեհր իմաստունի ճառը բժշկական գիտությանը վերա-
բերող մի քանի հարցերի մասին»³⁸: Այս «խրատնամակի» մի
առանձին բաժնում, բերված են նաև Արիստոտելին վերա-
գրված խրատներ:

«Չորս ցեղ...» խրատների պարսկերենից թարգմանված
լինելու մասին հայ գրչի նշումը («ի պարսից գտի») վկայում է,
որ հայերենի համար հիմք է հանդիսացել ինչ-որ պարսկերեն
բնագիր, որի տարբերակներից է և «խրատնամակի» օրինակը:

Պարսկերեն բնագրի առկայություն է թելադրում նույն հա-
յերեն ձեռագրի «խրատը իմաստասիրաց ասացեալ»-ը
(էջ 55ա—57ա):

Խրատների այս շարքերի գոյությունը մի ձեռագրում խոր-
հել է տալիս, որ խմբագիր գրչին հայտնի են եղել այդ խրատ-
ների, ներառյալ և Նուշիրվանի խրատների, պարսկական ծա-

³⁴ («Խրատնամակ», էջ 16—17) . ۱۶-۱۷ ح خردنامه

³⁵ Երևանի Մատենադարանի ձեռ. № 2291, էջ 57ր:

³⁶ «էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից»: Խմբագրու-
թյամբ և առաջարանով Կ. Մելիք-Օհանջանյանի: Երևան, 1957, էջ 153—158:

³⁷ Անդ, էջ 258:

³⁸ گفتار بترجمه تر حکیم اندر نکته های چند که بعلم پخشگی
تعلق دارد.

դումբ, ուստի և նա նստատակահարմար է գտել դրանք համախմբելու մի ժողովածուի մեջ:

Վերը, 7 կետերում բերված փաստաթղթերումները մեզ չի տվին հիմք են տալիս եղբայրացնելու, որ նուշիրվան արքայի անունով հայտնի հայերեն խրատները թարգմանված են պարսկերենից:

* * *

Նուշիրվանի խրատների հայերեն թարգմանություն ժամանակը ստույգ հայտնի չէ: Հավանական ժամանակը պետք է ընդունել ն. Ալինյանի նշած թիվը. նա «հետնագույն եզր» է ընդունում 1310 թ., որովհետև Վիեննայի № 791 ձեռագիրը, որտեղ պահված է խրատների հնագույն օրինակը, «Մովսես Երզնկացվո կազմած Ոսկեփորիկը կը ներկայացնե, խմբագրված 1310-են առաջ»³⁹:

Երևանի Մատենադարանի № 4724 և № 4726 ձեռագրերը, որոնք նույնպես ունեն նուշիրվանի խրատները, Մովսես Երզնկացու⁴⁰ կազմած «Ոսկեփորիկի» ընդօրինակություններն են: № 4724 ձեռագիրը, որը 1611 թ. գրչություն է և արտագրված է վանում Սահակ գրչի կողմից, ունի ընդարձակ հիշատակարան, որտեղ նույնպես Մովսես Երզնկացին է հիշվում որպես այս «Ոսկեփորիկի» կազմող:

«Որպէս որ իմաստուն ի ժամանակս գարնանա[յ]ին ի հովիտս լերանց շրջելով զգեղեցիկս ժողովէ և միափունջ կայեսցէ, նմանապես երիցս երանեալ սուրբ վարդապետն Մովսէս Երզրնգեցիմ ի յամենայն սուրբ գրոց ժողովեալ զլաւն և զգեղեցիկն և ի միում տփի եղեալ: Եւ կոչի անուն սուրբ գրոցս ոսկի փոր, վասն զի քան զամենայն ոսկի և արծաթ և ակունս պատւական է և գեղեցիկ սա»⁴¹:

³⁹ «Հանդէս տմսօրեայ», 1935, էջ 101:

⁴⁰ Մովսես Երզնկացու մասին տե՛ս Ղ. Ալիշան. Հայագատում, Վենետիկ, 1901, էջ 507—509: Հ. Անադյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 441—442: Հ. Քյուրտյան, Երիզա և Եկեղյաց դավառ, հ. Ա, Վենետիկ, 1953, էջ 253—260:

⁴¹ Երևանի Մատենադարանի ձեռ. № 4724, էջ 243ա:

Սահակ գրիչը այս հիշատակարանին կցած իր ներբողում մի անգամ ևս հիշում է Մովսեսին՝ անվանելով նրան «րաբունի».

«Ի յախտածեա ըստեաց ճնշեալ,
Սպիտակ գինիս այս նոր յատենեալ.
Բաբունին Մովսէս ի հոգս անգեալ
Պտուղ զայս հաւաքեալ...»⁴²:

Ձեռ. № 4724-ի հիշատակարանը հիմնականում, բացի գրչի, պատվիրատուի ու սրանց հարազատների անուններից և վերջին չափածո ներբողից, համընկնում է Վենետիկի № 986 Ոսկեփորիկի հիշատակարանին⁴³, իսկ ձեռ. № 4726-ը ունի միայն նշված հիշատակարանի սկզբի մասը:

Երևանի Մատենադարանի այս Ոսկեփորիկները բովանդակության որոշ տարբերություն ունեն Բ. Սարգիսյանի նկարագրած Վենետիկի № 986 Ոսկեփորիկից: Բայց վերջինս չունի Նուշիրվանի խրատները: Բանասեր Հ. Քյուրտյանը իր անձնական գրադարանում ունի Մովսես Երզնկացու «Ոսկեփորիկի» 1551 թ. մի ընդօրինակություն, որը նույնպես բովանդակության տարբերություն է տալիս Վենետիկի օրինակից⁴⁴:

Արդ, քանի որ Մովսես Երզնկացու «Ոսկեփորիկի» 3 ընդօրինակությունները (Վիննայի № 791, Երևանի № 4724 և № 4726) պարունակում են Նուշիրվանի խրատները, ուստի պետք է ընդունել, որ դրանք թարգմանվել են մինչ 1310-ը:

Ժամանակի ճշգրտման համար մի գուցե նպատակահարմար է հիշել XIII—XIV դարերի բարոյա-խրատական որոշ բանաստեղծություններ, որոնց մեջ այս խրատների հեռավոր արձագանքներն են երևում: Բայց և չի բացառվում մի երրորդ աղբյուրի գոյություն թե՛ այս բանաստեղծությունների և թե՛ Նուշիրվանի խրատների համար:

⁴² Անդ, էջ 247ր:

⁴³ Տե՛ս Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ. 1924, էջ 771—794:

⁴⁴ Հ. Քյուրտյան, Երիզա և Եկեղյաց գավառ, էջ 262:

Այսպես. Խաչատուր Կեչառեցին ունի՝
 «Զաչերդ շատ մի ածեր,
 Թէ ոչ՝ չար սըրով դա խոցի.
 Զլեղուդ արձակ մի թողուր,
 Որ չածէ զքեզ պատուհասի»⁴⁵:

Այս քառյակը հիշեցնում է Ծ ձեռագրի Ե թարկի 6-րդ խրատի տարբերակը՝ «Ի վայր զաչք ու զձեռն ու լեղու պատրաստ պահեցէք» կամ՝

«Զխորհուրդդ շասես կնոջ
 Եւ չընկնիս մճլիս ՚ւ ի գինի.
 Յայնժամ դու շահիս զաստէնս
 Եւ յանդէնն ես երանելի»⁴⁶:

Այս խրատին համադրոք է հնչում Կ ձեռագրի Ի թարկի 8-րդ խրատը. «Զամենայն որպիսութիւն ձեր, զբան և զխորհուրդ ձեր կանանց մի ասէք բնաւ»:

Հովհաննես Երզնկացուն վերագրվող քառյակ-խրատնեւրում ևս կան այնպիսիք, որոնք, ինչպես մեզ թվում է, որոշ աղբյուրներ ունեն նուշիրվանի խրատների հետ. այսպես.

«Զորս բան առ խրատ յինէն, որ զամէն աշխարհս քեզ
 արժէ.

Չայլոց մեղք դու մի բռնեւ, զքոյն յերակ մըտօքդ
 անդիճէ,

Զաստուած մօտ ի քեզ դու տես ու զմահուն օրքն դու յիշէ.
 Զխրատըս ի սրտիդ տընկէ, սա յամէն չարէ զքեզ պահէ»⁴⁷:

Ընդգծված հասվածք լրիվ համընկնում է Ծ ձեռագրի Թ թարկի 10-րդ խրատին՝ «Զայլոց մեղք դուք մի քննէք»:

Ավելի ուշ ժամանակներում նման արձագանքներ ենք գտնում Նաղաշ Հովնաթանի խրատական տաղերում: Այսպես, օրինակ.

⁴⁵ Մ. Ավգարեղյան, Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958, էջ 150:

⁴⁶ Անդ:

⁴⁷ Ա. Մրապլան, Հովհաննես Երզնկացի: Ուսումնասիրություն և բնագրեր, Երևան, 1958, էջ 145:

«Չասելոյ րանն քո տանն չտես»,

Լեզուդ կու սովորի՝ այլոց էլ կա-
սես,

Մեծատան մարդոյ ընդդէմ մի
կացցես,

Քո փորձած մարդն, չըլնի՝ նոր
փորձես»⁴⁸,

«Քոսք որ ասելոյ չէ՝ մի ասէք»
(ԺԵ—1)։

«Զլեզուներդ ի չար ասելն մի
սրէք» (ԺԵ—3)։

«Զփորձածն մի փորձէք» (Ս—4)։

* * *

Ինչպէս նշվեց վերը, Ն. Ալիշանը այս խրատները թարգմանված է համարում արաբերենից։ Սրանից ելնելով, նա ամենայն հավանականությամբ դրանց թարգմանիչ է ընդունում Առաքել Անեցուն և կամ նրա ընկերներին, որոնք 1222 թ. Անի քաղաքում արաբերենից մի երազահան են թարգմանել⁴⁹։ Բայց քանի որ մերժվում է խրատները արաբերենից թարգմանելու վարկածը, ուստի և թարգմանիչների ինքնության հարցը նույնպէս կասկածի տակ է առնվում։

Հայտնի է, որ վերոհիշյալ Ոսկեփորիկը կազմող Մովսէս Երզնկացին զարգացած ու բազմակողմանի գիտելիքների տեր անձնավորութիւն է եղել։ Նրա անանունն կենսագիրը հաղորդում է, որ նա «իբրև զմեզուս ի բուրաստան ծաղկանաց զանազանից վայրս ընթացեալ, և յարեմուտս և յարեելս, և յամենեցուն իբրև զխորիսիս մեղուաց զբանս վայելուչս աստուածային իմաստից համահաւաքեալ և ըստ կարողութեան ի կատարելութեան հասեալ...»⁵⁰։ Իսկ Ղ. Ալիշանը հայտնում է, որ «բացի Ոսկեփորիկի նյութերը ժողովելուց մի քանի խրատական և կանոնական բան գրած կա»⁵¹։

⁴⁸ Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծութիւններ։ Ժողովածուն պատրաստեցին Ասատուր Մնացականյան, Շուշանիկ Նաղարյան, Երևան, 1951, էջ 90։

⁴⁹ «Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 101։

⁵⁰ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 508։

⁵¹ Անդ, տողատակի ծանոթագր.։

Արգ, չատ հավանական է, որ բարոյա-խրատական գրա-
նկանություն նկատմամբ հետաքրքրություն տածող Մովսեսը,
որ շրջել է «յարևմուտս և յարևելս», ինքն իսկ նուշիրվանի
խրատները թարգմանած լինի և մտցրած իր կազմած «Ոսկե-
փորիկի» մեջ:

Վերը շարադրված փաստերն ու նուշիրվանի խրատների
հայերեն ու պարսկերեն տարբերակների համեմատություննե-
րը թույլ են տալիս եզրակացնելու.

1. Խոսքով Ա. Նուշիրվան արքայի օրոք և նրա իսկ անունով
կազմվել է պահլավերեն մի խրատական, որի համառոտ մի
խմբագրությունը հասել է մեզ:

2. Նուշիրվանի պահլավերեն խրատականը արաբերենի է
թարգմանվել ամենայն հավանականությամբ IX դարի սկզբնե-
րին՝ Մամուն Աբբասյան խալիֆի ժամանակ:

3. X դարի կեսերին արդեն գոյություն է ունեցել Նուշիր-
վանի խրատականի արաբերենից պարսկերեն կատարված
թարգմանությունը:

4. Նուշիրվանի հայերեն խրատները թարգմանված են
պարսկերենից:

5. Խրատների հայերեն թարգմանությունը կատարվել է
մինչ 1310 թ.:

6. Նուշիրվանի խրատները պարսկերենից հայերենի է
թարգմանել հավանաբար Մովսես Երզնկացին:

7. Նուշիրվանի խրատների հայերեն թարգմանությունը
պարսկերեն բնագրի վերականգնման համար վստահելի
հիմք է:

ԲՆԱԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Նուշիրվանի խրատների հայերեն միջնադարյան թարգմանությունը քննական բնագրերը կազմելու համար մեր առաջ երկու ուղի կար. առաջին՝ ընդարձակ և համառոտ խմբագրությունները ձուլել իրար և ներկայացնել որպես մեկ միասնական բնագիր, ինչպես արել է Ն. Ալիինյանը («Հանդէս ամսօրեայ», 1935 թ.), և երկրորդ՝ յուրաքանչյուր խմբագրություն ներկայացնել առանձին: Առաջին ուղուց մենք հրաժարվեցինք՝ նկատի ունենալով համառոտ խմբագրության չափազանց մեծ տարբերությունը ընդարձակից և ձեռագրերի բազմաթիվությունը. մինչդեռ Ն. Ալիինյանը ընդարձակ և համառոտ խմբագրություններից օգտագործել է մեկական ձեռագիր, միաժամանակ համառոտը համեմատելով «Սիրոնի» (1875 թ.) օրինակի հետ, մենք ընդարձակ խմբագրության համար ձեռքի տակ ենք ունեցել 12 ձեռագիր և Պոլսի 1708 թվականի հրատարակությունը, իսկ համառոտի համար՝ 9 ձեռագիր և «Սիրոնի» օրինակը:

2. Ընդարձակ խմբ. համար հիմք ենք ընդունել Վիեննայի № 791 ձեռագրի օրինակը՝ ըստ Ն. Ալիինյանի հրատարակության: Սրան հիմնականում համընկնում են Մաշտոցյան մատենադարանի № 4724, № 4726, № 5387 ձեռագրերի ընդօրինակությունները, որոնք, սակայն, առանձին թերություններ ունեն (№ 4724-ը չունի վերջին յոթ՝ ԺԶ—ԻԲ թարկերը, № 4726-ը չունի առանձին խրատներ, № 5387 ձեռագրի էջերը պատռված են, ևն), ինչպես նաև Վենետիկի № 1541 (նախկին № 263) ձեռագրի օրինակը:

Համառոտ խմբ. համար հիմք է ընդունված Մաշտոցյան մատենադարանի № 1113 ձեռագրի ընդօրինակությունը, որը 1616 թ. գրչություն է:

Բնագիրը կազմելիս հազվադեպ մեզ թույլ ենք տվել խոտորելու հիմք-բնագրից՝ եթե այլ ձեռագրեր տալիս են ավելի ճիշտ ընթերցում. այս դեպքում արդեն համեմատության համար դիմել ենք նաև պարսկերեն տարբերակներին: Յուրաքանչյուր նման միջամտության պատճառաբանությունը բերված է ծանոթագրություններում:

3. Քննական բնագրում չեն արտացոլված Մաշտոցյան մատենադարանի № 6536, № 8168, № 8963, № 10166 ձեռագրերը և Քյուրտյան հավաքածուի տաղարանը, որոնց մեջ գտնվող Նուշիրվանի խրատները «Պղնձե քաղաքի պատմության» XVIII և XIX դարերի տպագիր գրքից կատարված ընդօրինակություններ են:

4. Եթե որևէ ձեռագիր ունի լրացուցիչ խրատ, որը և ոչ մի ձեռագրում ղուգահեռ չունի, ապա այն բերվում է բնագրերի վերջում (էջ 81—84): Սա ավելի ցայտուն և պարզ է դարձնում յուրաքանչյուր գրչի կամ խմբագրողի միջամտությունը:

5. Եթե խրատը որևէ ձեռագրում խմբագրական մեծ փոփոխությունների է ենթարկված, ապա սվյալ խրատի բոլոր տարրնթերցումները նշելուց հետո, այն բերվում է ամբողջությամբ:

6. աւ> օ գրությունը ձեռագրերում միօրինակ չէ, ուստի բնագրում ամենուրեք աւ-ը փոխարինել ենք օ-ով: Որոշ ձեռագրերում աւ-ը փոխարինված է օ-ով: Այս դեպքում տարրնթերցվածներում տրվում են միայն արտառոց ձևերը. օրինակ՝ արժանօոր:

7. Բացարձակ տառասխալները տարրնթերցվածներում չենք տալիս:

8. Ոչ բոլոր ձեռագրերն են ամբողջությամբ պարունակում խրատները և դրանց դասավորությունն էլ միակերպ չէ, ուստի կազմեցինք խրատների համադրական տախտակներ, որտեղ ցույց է տրված, թե ներկա հրատարակության (առաջին սյունակ) ո՞ր խրատը սվյալ ձեռագրի ո՞ր խրատին է համապատասխանում: Խրատների համարակալումը ըստ թարիքերի մերն է: C և C1 ձեռագրերի ընդօրինակությունները, թեկուզ և չա-

փաղանց համառոտված են, բայց պատկանում են ընդարձակ խմբագրության խմբին և թարիերի շեն բաժանված, ուստի ընդհանուր համարակալում տվեցինք: Ընդհանուր համարակալում է տրված նաև համառոտ խմբագրությանը:

9. Սույն տշխատանքը արդեն շարված էր, երբ լույս տեսավ Մաշտոցյան մատենադարանի ձեռագրացուցակի Ա հատորը, որից և մեզ հայտնի դարձան Նուշիրվանի խրատները պարունակող շորս նոր ձեռագրեր (№ № 613, 2696, 2939, 4505), միաժամանակ Զմմառուց ստացանք № 156 ձեռագրի խրատների մանրաժապավենը: Համեմատությունը ցույց տվեց, որ այս ձեռագրերը որևէ էական բան չեն ավելացնում մեր կազմած քննական բնագրին, ուստի և հրաժարվեցինք դրանց տարընթերցումները նշելուց:

10. Աշխատության ներածության մեջ Նուշիրվանի պարսկերեն խրատների վեց աղբյուր ենք հիշատակել, դրանցից հինգի՝ «Ռահաթ օլ-էնսանի», «Խրատնամակի», Լենինգրադյան Անուշիրվանի դամբարանի, «Ընտրյալ պատմության» տարբերակները ըստ աղբյուրների ժամանակագրական կարգի դետեղում ենք հայերեն բնագրերից հետո: Լենինգրադյան և Անուշիրվանի դամբարանի տարբերակները հրատարակում ենք առաջին անգամ:

«Նուշիրվանի թագի ատամնաշարի խրատականը», շնայած ըստ էության հետաքրքիր աղբյուր է, այս բաժնում չենք դնում, որովհետև բուն խրատները չի ներկայացնում, այլ դրանք վերարտադրում է չափածո՝ բեյթերով:

11. Բնագրերի վերջում բերվում է Նուշիրվանի խրատների հայերեն թարգմանությունից օսմանյան թուրքերեն (հայատառ) կատարված թարգմանությունը:

ԽՐԱՏՔ
ՆՈՒՇԻՐՈՒԱՆ ԹԱԳԱԽՈՐԻ
(ԲՆԱԳՐԵՐ)

1.

ԸՆԴԱՐՁԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՐԱՏՔ ՆՈՒՇԻՐՈՒԱՆՔ ԹԱԳԱՌՈՐԻ

1. Կայր թագաւոր մի պարսիկ, անուն նորա Նուշ[ի]րուան յէդլ: Եւ ունէր թագ մի ոսկի. և յայն թագն էր շինած ի՞նք թարկ: Եւ գրած էր յամէն թարկ ժ բան, որ էր խրատ թագաւորութեան: Եւ յորժամ կամենայր հեծնուլ թա-
5. գաւորն, առնուր զթագն զայն և կարդայր առաջի իւր իշխանացն: Եւ հրամայէր թէ հասկացէք և ի միտ առէք

Խորագիր. AE Խրատ պիտանի և օգտակար ամենայն մարդոյ (B Բան շահաւէտ հ...): C Խրատ Նուշրուան թագաւորի ասացեալ է. պարս և լսել և միտ պահել: D Խրատ Նուշրուան կտիլին, Հոսմոյ թագաւորն: F Խրատ Նուշուան ասել պարսկաց թագաւորին ասացեալ: G Խրատ ասացեալ է Նուշրուան թագաւորին որ է պէտք հոգոյ և մարմնոյ: IV Պատմութիւն Նուշրուան թագաւորին (K... Նուշիստութեան...): J Խրատ պիտանի և օգտակար: P Խրատ և Նեսիհաթ օգտակար արարեալ գարմանագան թագաւորին, զոր Նուշրուան ասեն:

Մուտք: CG չիք: H պատուով:

1. A Ա Նուշրուան: B Նուշրուան յէտլ: E Նուշրուան: IV Նուշրուան:
2. E յէտլ: J չիք յէդլ: K յէտլ: IV էտլ: IKV աշն:
3. K թէրկ: K չիք գրած էր: IKV ամէն: IV թարկի: K թէրկ: K Կայր խրատ և փխ որ:
4. I որժամ կամենար: J կամենար: IV հեծնուր: K թագաւորն հեծնուլ և տեղ գնար. յայնժամ:
5. IV չիք խր:
6. IV իշխանացն և բան հոգերուն: BE հրամայէր ամենեցուն: K մտիկ արէք և հասկացիք: BIV հասկացիք:

զխրատա զայս, որ է պէտք հոգոյ և մարմնոյ: Եւ ապա
դնէր ի գլուխն և հեծնոյր: Եւ էր գրած լուրջ եաղութ
ակամբ և բացած զմրութեամբ:

Ա. Յառաջին թարկն գրած էր.

1. Զանձնահաճ մարդն յիսնէ ի զատ սլահեցէ՝ ք:
2. Արժանաւորացն ի յիմ դանձէն բաժին տուր:
3. Զանգտանելին մի՛ փնտռէք:

7. BEJ ի պէտք: E հոգւոյ:

8. I հեծնուր: ABDE աղութ: E հաղուտ: IV հաղութով:

9. IV և բանած զմրութ ակամբ քարիւ: K զմրութ ակամբ:

D Եւ ունէր [ն]շըրվան էտիլն թար մի և էր զուգած ի յայն թարն
Ի՞նչ պուրճ և գրած էր ի յամէն պրճին վրա ժ բան. խրատք այս է: Եւ
յորժամ կամենար որ ի սէր (սէյր) ելանէր նա մուֆէրտիկն կանչէր ի
բաղարն որ զային ու հասկանային թէ ինչ էր գրած ի թագաւորին
թագն. և կայր գրած իմաստութիւն և խրատ այս կենացս և այն:

F [ն]շըրուան տարլ թագաւոր էր պարսկաց և ունէր թար մի և
կայր ի յայն թարն շինած Ի՞նչ բուրք. կայր գրած ժ խաւսք. և յորժամ
հեծնուր կամէր այն թագաւորն զնէր զթարն ի գլուխն և ձայնեցնել
տայր որ ամենայն աշխարհն յերևան ելնէ և առէին թէ հասկացէր զոր
կայ գրած ի մեծ թագաւորին թակն և կայ յինքն մեծ իմաստութեամբ
յայտ կենաց և յայն:

P Սա ասեն թէ թագ մի ունէր սակի և պատուական տկներով և
շինած էր Ի՞նչ անկիւնով և ամէն անկիւն այս նէսիհաթներս գրեալ էր.
և յորժամ ելնէր ի գլուխ կարգայր առաջի գօրացն. և տուր թէ ի միտ
տուէր և ապա զնէր ի գլուխն և երթայր. և թագն էր հաղութ և զմրութ
ակամբ և ալմասով և լաճիվարդ քարով յորինեալ:

Ա. D և առաջին: FIV' առաջին: D ամենութիւն պուրճն (F բուրքն
կամ բուրգն) փխ թարկն: D այս էր գրած թէ: J չիք գրած էր: K գրած
էր այսպէս: P բուրք: բաժինները ցույց են տրվում հայկական այբուբե-
նի կարգով՝ Ա.—ԻԲ:

1. C զանձնահաճոյ: D զանձնապահն զգահայ: F զանձնայահաճու:
D մարդիք: F մարդիքն: BD ի յիսնէ: C յիսնի: J չիք յիսնէ:

2. Ի արժանօրացն: P արժանաւորաց: CP իմ: FG չիք ի: IV զանձնու:
CGP տվէր: I տուէր: V աւէր: K ի յիմ զանձնն արժանաւորացն բա-
ժին աւէր:

3. AP զանգիտելին: F զանգէտանելին: J զանգիտանելին: ABEJ մի
փնդուէր: D մի որոնէր: I մի փնտռէր:

4. Ի բաներն մի՛ արտորայք:
5. Զբանն ի ժամէ ժամ մի՛ ձգէք:
6. Զամէն բան թըղբիրով արարէ՛ք:
7. Ի խրատէ մի՛ ղպնիք և մի՛ գարշիք:
8. Զբանն բանգէտ մարդկաց դի՛ք:
9. Անպատեհ խօսք մի՛ խօսիր:

Բ. Յերկրորդ թարկն գրած էր.

1. Ի բանին սկիզբն և ի կատարումն հայեցարո՛ւք:
2. Յամէն բան որ մտանէք յառաջ զելն իմացէ՛ք:
3. Զամէն բան և զկտաւն տասն չափեցէ՛ք և ապա կտրեցէ՛ք:

4. KP ի բանէն: IV մի ատորայք: I չիք մի: D Զբանն որ կամէ մի ըշտապիր: F Զայն բանն որ յառնել կամիս մի ըշտապել:

5. E ժամէ ի ժամ: IJKV ի ժամէ ի ժամ: D Զառնելոյ բանն ի յօրէ յօր մի ձգէք (F... որի հօր մի ձգել):

6. D դէք ամէն (F յամէն): IFV բանն: E թատրրով: ID թապտրրով: F թապրով: K թապտիրով: V թըտպրով: D արէք: K վարէք:

7. F ի խրատուն: A մի դրնիք: FK մի խպնիք: K չիք մի գարշիք: ID եւ ի ցաւաք մարդոյ խրատն մի ղպնիք, լսեցէք:

8. D և զբանն: E յանգէտ: D մարդոյ: EID մարդկացն: DI գրէք: F Զբանն այն մարդուն զրէք որ բան կու գիտենայ:

9. DF զանպատեհ: DF խօսքն: D մի ասէք: P բանգէտ մարդկաց զէմ անպատեհ...

Բ. BEI յերկու: D և Բ: FK երկու: IV Բ: ABEI ապրահն փխ թարկն: D ճետագայում ամենուրեք՝ գրած էր թէ:

1. D բանին: P զբանին D սկիզբն ամէք: P ի կատարածն:

2. IV ամէն: F բանն: P յօր տուն փխ յամէն բան: I մտնոյք: V մտնուք: BE յառաջն: I առաջն: V առաջին: F ղելնելն: IV յելն: BHV իմացիր: F իմասջիր: P իմացարուք: D Զինչ բան որ մտնուք գառաջն ղելն իմացէք:

3. G ամէն: K զամէն կտաւ և թէ ինչ լինի: GJE կտաւ և զբան: P կամ փխ և: BH ղկտաւ: IPV կտաւ: BEIHKV ժ անդամ: G ժ հեղ: J ժ տարպա P ժ ապարա: BEIHKV ձեկեցէք փխ չափեցէք: C Զկտաւն ժ-ն չափէ և ապա կտրէ: D Զհալօ ժ հեա չափեցէք և ապա կտրեցէք (F Զձեր հալաւն ժ դիր ձեկեցէք...):

4. Զփորձածն մի՛ փորձէք:
5. Զփորձածն յանփորձն մի՛ տայք:
6. Զմարդ որ չէք փորձել՝ ընդ նմա մի՛ վարիք:
7. Զխոստումն որ ի ձեզ՝ մինչև ձեր անձդ մի՛ խնայէք:
8. Սակաւ խոստացէ՛ք և աւելի կատարեցէ՛ք:

Գ. Յերրորդ թարկն գրած էր.

1. Անուանի և խոնարհութեան արուեստ ուսի՛ք:
2. Զճշմարտութիւն ձեզ արարէ՛ք արուեստ:
3. Զկարողութեան հարկիքն գիտացի՛ք:
4. Զհամբերող մարդն ճանաչեցէ՛ք:
5. Զայս կեանքս մի օր գիտացի՛ք:
6. Զառողջութեան հարկիքն իմացի՛ք:

5. Բ յանփորձ: ԼՎ՝ անփորձն: Կ՝ անփորձ: Բ՝ անփորձի: Կ՝ մի տար:

6. ԸԻՔՎ՝ գմարդն: Բ՝ մարդ: Ը՝ չեւ: Լ՝ փորձեալ: ԸԻ՝ փորձեր: Ը՝ հետ նմա: Լ՝ ի յինքն (Բ՝ անոր) փխ ընդ նմա: Բ՝ ընդ ինքն: Ը՝ մի նստիք (Լ՝ մի յարիք Բ՝ մի վատահանայք) փխ մի վարիք: ԲԸԻԿ՝ մի վանիք:

7. Բ՝ չիք որ ի ձեզ: Վ՝ որ ձեզ: ԼՎ՝ որ ի ձեզ է: Բ՝ մինչև ընդ: Լ՝ մինչ: ԻԲ՝ ի ձեր: ԼՎ՝ ի ձեր անձդ ձեր բարեկամին: ԼԲ՝ անձն: Լ՝ Զխոստումն մի խնայէք: Կ՝ Որ ի ձեզանէ ինչ որ խնդրէն մինչև ձեր անձն խնայէք:

8. ԲԸԻԼԿՎ՝ խոստացիք: Ը՝ խոստացիր: ԸԲ՝ յաւելի: Լ՝ աւելին:

Գ. ԲԻԼ՝ յերեր: Լ՝ և Գ: ԸԲ՝ երէք: ԻԿ՝ Գ: Բ՝ հետազայում ամենաւրեք գրած կայք:

1. Լ՝ չիք անուանի ե: Բ՝ անկեղծ ողորմութիւն փխ անուանի: Լ՝ խոնարհութեամբ: Բ՝ խոնարհութիւն: ԼՎ՝ իմաստութեան փխ խոնարհութեան: Բ՝ խոնարհ:

2. Վ՝ զճշմարտութիւնն: Կ՝ ձեր: Կ՝ արուեստ արէք: Բ՝ սիրեցէք փխ ձեզ արարէք արուեստ: ԼԲ՝ եւ ձեզ ճշմարիտ անուն գրէք:

3. Լ՝ իմացիք (ԼԻ՝ իմացիք) փխ գիտացիք: Բ՝ գիտաջիք: Բ՝ գիտացէք:

5. Բ՝ օր մի: ԸԲ՝ գիտացէք: Բ՝ գիտաջիք:

6. ԼՎ՝ գիտացիք (Բ՝ գիտացէք) փխ իմացիք:

7. Զձեր կեանքդ անդիտութեամբ մի անցուցանէ՞ք:
8. Յայլոց տրտմութիւն մի խնդայք:
9. Ընդ կոտրածն², ընդ զնացածն, ընդ այրածն, ընդ վայթածն մի՛ տրտմիր:
10. Զայս կեանքս իջեան գիտացէ՞ք³:

Դ. Ի շորորդ թարկն գրած էր.

1. Ի մեծամեծաց որողայթն կոծեցալո՞ւք:
2. Զղենի ժամն լաւ գիտացի՛ք քան զայլ ժամսն՝:
3. Մարդկաց ամէն իրաց համբերեցէ՞ք:
4. Ի տեղի ուր համբերել պիտի, մի՞ շտապիր:
5. Հետ ամէն մարդոյ հաշտ կացէ՞ք:
6. Ի բաներն ոխակալ մի՞ լինիր:
7. Ամէն մարդ թող գիր չափն գիտենայ:

7. FIKPV կեանքն: Ժ կեանքս: C մի անցաներ: D GK մի անցաներ: Լ PV մի անցաներ:

8. Ը ընդ այլոց: Լ V այլոց: Բ Ի յայլոց:

9. ABJKV ընդ կտրածն: Լ Ի կտրածն: Բ Ի կտրածն ու Ի գնացածն և վաթածն ու արեցածն: B չիք ընդ այրածն: Լ ընդ վեթածն: K ընդ վաթածն: V ընդ վիթածն: Լ ընդ թափածն: Լ Ի կտրած ու Ի գնացած իրաց մի արտմիր:

10. Բ օթեան փխ իջեան: Բ գիտաջիր:

Դ. BE Ի Դ: Ը Ի շորս: FK շորս: Լ V Դ: Լ թարկ:

1. Ը Ի մեծունաց: Լ V Ի մեծամեծացն: BE որողայթն: FK յորողայթն: V յորողայթն: Լ Կոծեցէք: F Կոծեցալոք:

2. A գենի: Լ V գէնի: E գիտացէք: Լ V քանց անժամն: E ժամ: Ը Եւստորդ խրատի շարունակութեան Լ՝ ու գենին ժամն յայլք: F Զղենի ժամն լաւ գիտաջիր քան զլաւ գտնժամ շահն:

3. Ը ամենայն չեմ արժան մարդկաց: Բ մարդկանց: BKEP ամենայն: F ամենայն չաք մարդկաց:

4. Ը Ի տեղն: Ը Ի տեղ: ADF որ (V իւր) փխ ուր: Լ համբերեցէք: Ը պատասխանի մի տաք փխ մի շտապիր: Լ V մի տառալք:

5. Ը ընդ ամենայն: Լ V Ի հետ: Լ KV կացիր:

6. Բ Ի հետ մարդոյ փխ Ի բաներն:

7. E գամէն: F յամենայն: F չիք թող: E չարն փխ չափն: AP Ի մանայ փխ գիտենայ: Լ գիտացիր: Բ գիր չափն թող: Ը Ամէն մարդ Ի ձեր չափն կացէք:

8. Զոտյներդ աւելի քան զձեր չափն մի՝ մեկնէք⁵;
9. Ի պատերազմն երես մի՝ դարձուցանէք;
10. Զայլոց կռիւ ձեր անձինդ մի՝ առնուք:

Ե. Ի հինգերորդ թարկն գրած էր.

1. Զկռիւն միջակ արարէ՛ք;
2. Զբաներն համբերութեամբ արարէ՛ք;
3. Զծախն ի մտոյն վերայ արարէ՛ք⁶;
4. Անթիւ և անհաշիւ մի հանէ՛ք⁶;
5. Սկիզբն նոր տնկոյն արարէք և ապա զհինն խլեցէ՛ք;
6. Զերևելի զգայարանս ձեր պատրաստ պահեցէ՛ք⁷:

8. Ա գոտներու: Ա չիր աւելի: Ե չիր զձեր: IV մի երկնցնէք: D Եւ քան զձեր չափն աւելի մի կենայ: Բ Որքան զձեր չափն աւելի է մի քննէք: Բ Ե քարկ, 5. Զոտրդ զբնդ ձեր անկողնովն սփռեցէք (D Ե քարկ, 4. Զձեր ոտն ի ձեր...): D Զձեր ոտն քան զձեր անկողինն աւելի մի մեկնէք:

9. Ա ի պատերազմ: Բ ի կռիւն: IV ի պատերազմի ժամն: Կ ի պատերազմին: Բ ի պատերազմէ: ԲԲ մի դարձնէք: IV մի երես (V յերես) դարձնէք:

10. D գայլ: V կռիւն: CDFGHIKV ի ձեր: B յանձդ: C անձու: D յանձն: EK անձն: FGHI անձդ: CG մի առնէք և կռվիր: H մի առնոյք, Կ մի առնէք: Բ Զայլոց կռիւն ի ձեր յանձն մի յառնէք:

Ե. D և Ե: FK հինգ: ABE սպրահն փխ թարկն:

1. CG համբերելով և միջակ: IV արէք: Բ կռիւ թէ հանդիպի ձեր մէջն միջակ արարէք բայց շուտ հաշտեցարուք:

2. DFIV գրանն: Բ գամէն բան FIKPV համբերելով: D արէք:

3. Կ ի մտաց վրայ արէք: Բ ի մտոց վեր հանէք: IV Զտանն խաբճն վաստակին կորայ արէք:

4. ABEH նախորդ խրատի շարունակութիւնն է՝ և անթիւ: Բ անհամար փխ անթիւ: IV մի առնէք: Կ մի հանէք, այլ միջակ:

5. Ե անկեկոյն: Բ անկելոյ: Բ անկու արարէք զհին տունկն արարէք աւելի: G տնկելոյ արարիր (Կ արէք): CIV Զնորն տնկեցէք և ապա զհինն հանեցէք: D Սկիզբն տան ձգեցէք ու զհին տունն զնեցէք:

6. Ե զգայարանն: Կ զգայարանն: Բ զգայարանն: D Ի վայր զաչք ու զձեռն ու լեզու պատրաստ պահեցէք: Բ Զաչք ու զձեռք ու զլեզու պատրաստ կացէք:

7. Յանպատեն՝ բաներուն պատրաստ և ի դատ կացե՛ք⁸։
8. Ի մէջ մարդաձայնի և յանուանի վատանուն մի՛ լինիք՝

2. Ի վեցերորդ թարին գրած էր.

1. Ի գողերոյ ընչից մի՛ շահիք։
2. Յեզր թագաւորի դարպաս և կայարան մի՛ շինէք։
3. Ի ձեր բնակութեան տեղւոյն մօտ խանութ մի՛ շինէք։
4. Ի պիղծ և յանպատեն թաղուց ի դատ կացե՛ք⁹։
5. Որք անխրատք են թող իշխանաւորի ծառայութիւն չառնեն¹⁰։
6. Անընկեր ի ճանապարհ մի՛ երթաք։
7. Անարժանիցն մի՛ խոնարհիք։

7. Ա բերանոյն փխ բաներուն։ IV կացիք։ D Ի յամենայն փառէ ի յանպատեն բանէ ի դատ կացէք։ F Անպատեն բերանոն ի դատ կացէք։ P Անպատեն բաներուն ի դատ կացէք։

8. IPV մարդկաց։ IPV չիք և յանուանի։ EK անուանի։ D Ի մարդաձայնի տեղ վատանուն մի հանէք։ F Մարդանոց տեղի վատանուն մի լինիք։

2. D Ի վեց։ FK վեց։

1. P Ի գողունեաց։ A ընչիցն։

2. F յետ փխ յեզր։ KP Ի յեզեր։ F դարպաս տուն խանութ։ AF չիք և կայարան։ B կայարանս ձեզ։ P տուն փխ դարպաս և կայարան։ E մի շինիք։ D Ի թագաւորի և ի պարոնի դարպասի տուն խանութ մի շինէք։ IV Ի մօտ թագաւորի և ի մօտ գինոյ տան ի մօտն բողապանի ի ձորու բերան տուն մի շինէք։

3. BEK չիք ի։ P գձեր։ IV տանն փխ բնակութեան տեղւոյն։ BK տեղոյն։ AB հանութ։ P չիք տեղւոյն։

4. KV Ի պեղծ։ IKV անպատեն։ E թաղուց և ի մարդոց։ IV կացիք։ P մահէլէից փխ և յանպատեն թաղուց։ D Ի գէշ մհալայէ և ի պեղծ գրացներու ի դատ կացէք (F Ի պեղծ թաղուց և ի գրացներու...)։

5. K որ։ EK իշխանաւորի։ P իշխանաւորի թող։ IV իշխանի։ IK PV չանեն։ D Անխրատ թագաւորի ու պարոնի ծառայութիւն մի առնէք։ F Անխրատք թագաւորին ծառայութիւն մի երթէք։

6. D Ի ճանապարհ։ I ճանապարհ։ DEIKPV մի երթաք։

7. IV անարժան մարդոյ։ CEKP անարժանից։ CG մի խոնարհիք և խորհուրդ մի ասէք։ F Ծառայութիւն անարժանից մի առնէք։

8. Հետ չարակամացն մի՛ դատիր:

9. Յօտար հող ծառ մի՛ տնկէք:

է. Ի յեօթներորդ թարկն գրած էր.

1. Յաղահատ տեղիք սերմն մի՛ ցանէք¹¹:

2. Ի հետ անարժան մարդկաց մի՛ նստիր:

3. Հետ ամէն ազգ մարդոյ մի՛ փաթթիր:

4. Փոխ ի նորքսակ մարդոյ մի՛ առնուր:

5. Հետ անհարկից սէր մի՛ դնէք:

6. Ի քամոս մարդկաց հաւատք և աղուհաց մի՛ քնքշաք:

7. Ընդ դեկնով գնածքն կռիւ մի՛ առնէք¹²:

8. IV ի հետ: B11 չարակամաց: P չար կամաց: D հետ չար մարդոյ մի գատիր ու ոչ սէր մի դնէք: V հետ չմարդկաց մի գատիր և մի գա- սիր:

9. DP ի յօտար: CG ծառ և բուս:

է. D եօթներորդ: FIKV եօթն: H ի յեօթն:

1. CG հողահատ: K աղուհատ: P ի յաղահատ: A տեղք: P սերմ: CG մի ձգէք: F Յաղտաղ տեղից անկ մի առնէք: IV ի չօր տեղն ծառ (V սերմն) մի ցանէք:

2. KP հետ: IV մարդոյ: P մի նստէք:

3. D ի հետ: K ամենայն: D մարդ: F մարդու: BD մի փաթաթիր: F փաթթիր: I մի փատթէք: P մի փաթթվէք: V մի փատթիր:

4. DHPV ի նորքսակ մարդոյ (P մարդկէ) փոխ (D իրք մի փոխ չառնէք: IV զբամ ի փոխ: K չիր ի): F ի նորայքսակ մարդէ իրք ի փոխ մի առնէք:

5. IV ի հետ: BIKV անհարկից: F անհարկաց: D անհարկի մար- գոյն: IV մի առնէք փխ մի դնէք:

6. I ի քամոսոս: V ի քամոս: B հաւատաք: FV ու փխ և E ահու- հաց: H քնքշայք: D ի քամոս մարդոյ սէր ու աղուհաց մի որոնէք: K 6 և 7 խրատեմքն: E6՝ 6. Ի քամոս մարդկաց ի գատ կացէք: 7. Անհա-ւատից աղուհաց մի քնքշաք: P Քամոս մարդկաց մի աւատայք և հետ նոցա աղուհաց մի ուտէք:

7. IV չիր դեկնով: ABE գնածքն (H գնածն: F զընածոց խետ: IV տուքնած մարդոյն) փխ գնածքն: F մի առնէք:

8. Որ չամաչէ և չվախէ յիւրմէն ի վատ կացէ՛ք:
9. Հեռ շտեմած մարդկացն սէր մի՛ դնէք:
10. Անասլ մարդկաց կին մի՞ ուզէք¹³:

Ը. Ի յութերորդ թարկն գրած էր.

1. Որ ի մօրէն ցաւոտ և յիմար ծնանի իւրենն դեղ մի՛ առնէք:
2. Աբլահ մարդուն ու խումարին ու հարբածին խրատ մի՛ տաք:
3. Դուք դձեղ մեծ մի՛ տեսնուք:
4. Ի լեզուանի կնոջէ պատրաստ կացէ՛ք:
5. Ով որ վխրատն ճանաչէ և սիրէ այնոր տո՛ւք:
6. Զուտելն ու զխմելն մէն մի՛ սիրէք¹⁴:
7. Ձեր հնազանդելոցն ուժ մի՛ առնէք:

8. D ով: F չամաչէ: F չիք և: B չվահէ: D ու չվախենայ: F կամ վախէ: IV ու չի վախենայ: K ի վախէ ի յաստուծոյ և ի մարդուէ: B ի յուրմէն: DIV իւրմէն: E ի յիւրմէն: F յիւրմէնն: H յիւրմէ: H գատ: B կաց: DIK կացիք: H կացիր:

9. IV ի հեռ չիտես մարդոյն: F լոյս շտեմած: AB լոյս սէր: K պինդ սէր: D Հեռ նորայլոյս տեսած մարդոյ սէր մի դնէք: P Չտեսած մարդոյ հեռ սիրելութիւն մի առնէք:

Ը. D ութներորդ: F ութն: IV Ը: K ութ:

1. A ցաւ: IV չիք իւրենն: I մի աչնէք: V մի առնէք: D Թէ հայր ու մայր ապլահ ու ցաւոտ իրնի իրեն դեղ մի առնէք: F Թէ որ ի մօրէ ցօտ և ապլահ ծնաւ. իւրն դեղ մի տայք: P Տղայն որ ի մօրէն ցաւոտ ծնանի իւրն տեղ մի առնէք զիրա ֆայտա չունի:

2. F յիմար փխ արլահ: IV ապլահ: B մարդոյն: E խումարին: BE IV մի տայք: G Անդիտաց և դիւանարաց և արբեցողաց խրատ մի տայք: P Անշահ մարդոյն և խելատին հարբածին խրատ մի տայք:

3. FK մի տեսնէք:

4. F ի լեզվանի I կնոջէ դէտ ի օձէ փախիցէք (V կնոջէ... յօձէ փախիցիր): K կացիր:

5. F չիք ով: P չիք ճանաչէ: F նորա փխ այնոր: P ազէք:

6. V չիք ու: K խմելն: ABE չիք մէն: FIV միայն P միւնակ: G Զերակուր և գնդելիս առանձայրար մի ընթրիք:

7. D ձեզ: IV յոյժ: P կուճ փխ ուժ: P մի առնէք:

8. Յանսպատենհ պատճառէ զծառայն մի' ծեծէք:

9. Յայլոց հաց աչք մի' ձգէք:

Թ. Ի յիններորդ թարին գրած էր.

1. Զձեր հացն յայլոց սեղան մի' դնէք:

2. Երբ զձեր հացն ուտէք զձեր զրուցն տո'ւք:

3. Ի տղայոց թըղբիր մի' առնուք:

4. Զօտար կին և զպառաւ ի ձեր տունն մի' թողուք:

5. Ի չար կնոջ հիլաթէ պատրաստ կացէ'ք:

6. Զձեզ ծառայ մարմներոյդ մի' առնէք:

7. Ընդ դստերաց մահ մի' տրտմիք:

8. Ի յօտարն մի' վստահանայք զերդ ի փորձածն:

8. IPV անպատենհ: K հանպատենհ: I և անպատճառ: P զծառայն ձեր:

9. DP Ի յայլոց: IV ալլոց: B հացն: FIV հացի:

Թ. D իներորդ: FK ինն: IV թ:

1. D Ի յայլոց: I Ի ալլոց: PV ալլոց: I սեղանն: DF մի ուտէք:
K Երբ զձեր հացն ուտէք աստծոյ զօհանալով կերէք:

2. A Երբ որ: F չիք երբ: EH զրոյցն: D բանն հօգացէք փխ զրուցն
տուք: K Ի մեճիս նստիք փխ զձեր հացն ուտէք: P տեսէք փխ տուք:

3. B թըթբիր: EIV թաղիր: K թաղիր մի առնէք: F Յոխակալ և ի
տղայ մարդկաց թաղիր մի ուզէք: P Տղայոց և ճէհիլոց հետ թէտղիր
և մուշաղիւրէ մի առնէք:

4. G յօտար: P օտար: D չիք կին: P պառաւ: C պառաւ տունս
մի թողուք: F չիք և: FG Ի տուն: H տուն: P մի թողէք:

5. D Ի կնկանէ: F Ի կնկան: IV կնոջէ: ABE խիլաթէ: IV Ի հիլէ-
թէ: EHIKV կացիք: G Ի յանդամ կնոջն պատրաստեցէք:

6. K զձեր հոգին մարմներուդ (P ձեր մարմնոյն) ծառայ: B մարմ-
ներուտ: E մարմներուդ: H մարմներուդ ծառայ: IV մարմնոյդ: P մի ա-
ռնէք: F Զձեր մարմնոյդ զեր մի առնէք:

7. K չիք ընդ: DF Ի դստերաց: DFHIV մահն: P Զեր որդւոց և
զատերաց մահն...

8. BEH Ի յօտարն բան (I Ի օտարն: KP Ի յօտար): I գէտ: K չիք
զերդ ի փորձածն: P զերթ փորձած: D Ի յատարք մի վստահանաւք:
F Յատար հացն մի վստահանայք:

ժ. Ի տասներորդ թարկն գրած էր.

1. Զիգերն յորձերն ի պահ մի՛ տաք:
2. Յօտար իրքն աւելի քան զտէրն մի՛ սրտաքաւիք:
3. Յօտար մարդոյ տուն տանտրութիւն մի՛ առնէք:
4. Զայլք ի ձեր տունն տանուտէր մի՛ ղնէք:
5. Այն մարդիկքն որ զայս կեանքս ատեն և արհամարհեն,
զուր զիրեանքն մի՛ ատէք և արհամարհէք:
6. Ի մէջ այր և կնոջ, ծառայի և աղաւթի շառ մի՛ ձգէք:

ժԱ. Ի մետասաներորդ թարկն գրած էր.

1. Առ թագաւորն պատրաստ և հաւարկու կացէ՛ք:
2. Թագաւորն թէպէտ խոնարհի՛ զուր մի՛ համարձակիր:

ժ. Ը տասներորդ: ԲԻԿ տասն: Ի ի տասն:

1. IV գէղերն: Կ գէղն: Լ ի որձերն: Կ ի յորձն: ԵԻ ամանաթ փխ
ի պահ: ԵԻԿՎ մի տայք: Բ Զայլին ձեր օտարի ի պահոց մի տայք:

2. Ը օտար: Բ օտար մարդկաց: ԸԲԿ իրք: Ը իքն: ԸԿ քան
զտէրն աւելի: Բ քան զիւր: Ը մի սրտաքաւիք: Ը մի սրտացուցէք: Ը
մի սրտաքաւիք: Բ Ի յայլոց ապրանք իրիկ զտէրն իւր մի վստահա-
նայք:

3. Ը և ի յայլոց տունն: Բ ի օտար: Ը տան: IV տունն: ԸԸԸԸ
տանուտրութիւն: Ը տանուտէր: Ը տանուտրութիւն: Ը մի առնէ: Ը մի
ղնէք: Ը Յայլոց տանն տանուտէր մի կենայք:

4. Ը զայլին: Ը և մի ղնէք զայլն ձեր տունն տանուտէր: Բ Զօ-
տարն որ չէք ճանաչէք ի ձեր տունն տանուտէր մի ղնէք:

5. Ը զայն: IV մարդիքն: Ը մարդն: IV չիք զիրեանքն: Ը զայն
մարդն փխ զիրեանքն: ԸԸ չիք և արհամարհէք: Ը... կեանքս խիստ կը
սիրեն, զուր զնոսա մի սիրէք:

6. Ը չիք ի մէջ: Ը ար ու կենաց ու պարոնի ու ծառայի: Ը և եղ-
բարց ատելութիւն փխ ծառայի և աղաւթ շառ: ԸԸԸԸԸԸ պարոնի փխ
աղաւթ: Ը երիկ կնկան շառ մի ձկէք: Ը 8 և 9 խրատներն են՝ 8. Այր
և կնոջ մէջ վատ խօսք մի ձգէք: 9. Պարոնի և ծառայի մէջ շառ մի
ձգէք:

ժԻ. Ը մետասաներորդ: Բ տասնիմին: Ը մետասան:

1. ԸԸ առ թագաւոր: Ը թագաւորի մօտ: Ը հաւարկու և պատ-
րաստ: Ը ահ կացէք: Ը Ի թագաւորի յահէ պատրաստ կացիք:

2. ԸԸ թագաւոր: Ը պարոն քանի խոնարհ լինի փխ թագաւորն
թէպէտ խոնարհի: ԸԸԸԸԸԸ թէպէտ և: Ը թագաւորն որչափ խոնարհ
լինի մի համարձակիր ընդդէմ իւրն:

3. Իշխանաւոր երբ սակաւ սէր ցուցանէ, զինքն մեծ սիրեցէ՛ք:
4. Ի յոխակալ մարդկաց ի զատ կացէ՛ք:
5. Զամէն մարդոյ հարկիք իմացէ՛ք:
6. Ընդ բախտաւորքն մի՛ նախանձիրք:
7. Ընդ տօլվաթաւորքն մի՛ նախանձիրք:
8. Ընդ իմաստունքն մի՛ վանիրք:
9. Որ տէր է գրչի և իմաստութեան քարտօղարի զնոսաթեթե մի՛ տեսնուք, այլ լաւութիւն արարէ՛ք:
10. Ի բանաստեղծ մարդկաց սլաւրաստ կացէ՛ք:

ԺԲ. Ի յերկոտասաներորդ թարկն գրած էր.

3. A Իշխանաւորք: C Իշխանաւորն թէ: IV Իշխանաւորն: G որ երբ: A ցուցանէ: G ցուցնէ զինք: H զնա փխ զինքն: DF Պարոն (Բ թագաւորն) զձեզ սակօ սիրէ զուր զինքն շատ (Բ մեծ) սիրեցէք P Իշխանաւորն սակաւ սիրեցէք, բայց ի գէյգէթն զինքն մեծ սիրեցէք:

4. F չիք ի: IPV ի սխալար: IV մարդոյ: K մարդկացն գատ:

5. HIKV հարկիքն: BEHK իմացիր: IV՝ գիտացէք: D Զամէն մարդոյն ի յիր արժանն սիրեցէք: F Զամէն մարդ իւր արժանքն սիրեցէք:

6. H Ընդ բախտաւորն: K մի հակասակիր փխ մի նախանձիրք. CFGP 6 և 7 խրատները մխանայար. CG Ընդ բախտաւորքն և Ընդ տօլվաթիւրք: F Ընդ բաղտօրք կամ Ընդ զօլվաթօրքն մի նախանձիրք կամ սխանայք: P Ընդ բախտաւորն և Ընդ տօլվաթաւորն մի նախանձէք:

7. D Ընդ տօլվաթիւր մարդն մի սխալունէք:

8. A Ընդ իմաստունք: F Ընդ իմաստուն: IV մի հակասակիր փխ մի վանիրք: P Ընդ իմաստունքն մի գէմ առնէք և քամահէք զի նոքա տէր են գրչի և իմաստութեան: P 10 խրատը՝ Ընդ հանճարեղին մի վանէք:

9. A ո (IV գի) փխ որ: C չիք և: CGIKV չիք քարտօղարի: K զնա: C զնոքայ թեթե մի առնուք: K մի տեսնէք: CGIK չիք այլ լաւութիւն արարէք: D Ով իմաստուն և զրազեա զնայ թեթե մի տեսնուք: F Որ իմաստուն է և զոչօր զնոսայ թեթե մի տեսնէք: P Այնոր որ գիտունք են զնոսա թեթե մի տեսնուք:

10. C ի բան գտակո՛ւ: P բանըտակո՛ւ: IV մարդկացն: D մարդոյ: DFP ի գատ փխ սլաւրաստ: DCI կացիր:

ԺԲ. D Երկոյտասաներորդ: F տառնեկիւ: K երկոտասան: IV ԺԲ: E գրած է:

1. Իսկի զմարդ մի՛ թլահէք:
2. Զմեծամեծք մեծ տեսէ՛ք:
3. Զխաբէութիւն կտրեցէ՛ք, որ անհոգ կենաք:
4. Հետ ժլատ և ոչինչ մարդկաց մի՛ դատիք:
5. Զհօր և զմօր հարկիքն մեծ տեսէ՛ք:
6. Ի ծերոց ի մօտաւորութենէն մի՛ կտրիք:
7. Ի մի հետէ մարդոյ մի՛ տաք զձեզ կլանել:
8. Զերդումն և զպայմանն մի՛ կոխէք:
9. Անկոչ ի մարդոյ պատիւ մի՛ երթայք:

1. Բ իսկ ամէնեին: Լ իսկ: Կ՝ զմարդն: Կ թլահէք, որ է տնազէք:
 Ը Ամենին զմարդ մի տնազէք: Ք Դուք զմարդ ծաղր ու տնազ մի
 ասնէք:

2. Է գմեծքն: ԲԻ գմեծամեծքն: Լ գմեծնքն: Վ գմեծն: Կ՝ մեծա-
 մեծքն: Կ լաւ վի՛ս մեծ: Ա տեսէք մեծ: Ք Զմեծն մեծ սիրեցէք: ԸԲ
 Զծեր մարդեան հարկերեցէք (Ը հարկերեցէք) և մեծ (Բ և պարտնայքն
 գմեծ) տեսէք: ԿԿՔ ունեն երկրորդ տարբերակ. Կ՝ Զծերն հարկօք սի-
 րեցէք: ԿՔ Զծերքն հարկաւ (Ք հարկօք) սիրեցէք:

3. Ը զհարբածութիւն ի ձեռն կտրեցէք: Բ զարբեծութիւն կտրեցէք
 ի ձեզնէ, որ: Ա անհոգք: ԲԿ՝ կենայք: Ի մնայք: Ը լինիք: Բ կենօք: Ք
 Զխաբութիւն կտրեցէք ի միջոյ որ անհոգ կենայք:

4. ԸԲԿ՝ ի հետ: Բ շլատ ու: Կ՝ նարէս վի՛ս ժլատ: ԱԲ մարդկանց:
 Ը մարդոյ: Բ մարդու: Կ՝ մարդկացն:

5. ԲԷԿ՝ զմօր և զազգի: Կ՝ գիտացիք վի՛ս մեծ տեսէք: Բ Զծեր
 ծնօղն մեծարեցէք և սիրեցէք:

6. ԲԷ ի ծերոցն: Ը Ի ծերոց և մեծացմեծաց մի կտրիք (Բ... մե-
 ծայմեծաց մի կտրէք): Կ՝ Զծերն ի մօտաւորութենէ (Լ ի մօտօրու-
 թեան) մի կտրէք: Ք ի ձեր մօտ ազգէն մի կտրիք:

7. Կ՝ մի հետ: Կ՝ մէկ հետէ: Ք ի մէկ հետ: Ը մարդկէ զձեզ կլանել
 մի տաք: ԲԷԿ՝ մի տայք: Ը զձեզ կլանել մի տցէք: Կ՝ կլանել զձեզ:
 Ը Ը՞հ հետ զձեզ մարդոյ կոխ մի տայք (Բ ի մէկ... կոխել մի տաք):

8. Բ զպայմանն: Բ՝ մի ստէք վի՛ս մի կոխէք: Ը Զերդումն ու
 զզաւրն պինդ պահեցէք և մի ստէք: Կ՝ 8 և 9 խրատներն են. 8) եր-
 դումն մի երզնուք: 9) Եւ զպայմանին խոտաւ մի կոխէք: Ք Զերդումն
 և զպայմանն որ է անտ ու աման մի կոխէք:

9. Ա անկոչել: Կ՝ ստանց ձեռնել: Ք չիք ի մարդոյ: Բ պատիւ և
 հարստանիք: ԲԷԿ՝ մի զնայք:

ԺԳ. Ի յերեքտասաներորդ թարկն գրած էր.

1. Զամենայն աուրս ձեր խրատիւ և իմաստութեամբ վարեցէ՛ք:
2. Թէպէտ և դուք չարք լինիք՝ զաղէկն սիրեցէ՛ք:
3. Իսկ եթէ աղէկ լինիք՝ զչարն մի՛ բամբասէք:
4. Վատ մարդկացն յիրեանց սուտն մի՛ օգնէք:
5. Ի սիրելոյ և ի շարկամէ զգութն մի՛ վերացնէք:
6. Ի հետ մահու պիղծ դիր մի՛ դնէք:
7. Զեզ ուսում և խելք ուսի՛ք:
8. Ի խրատէ մի՛ զբնիք¹⁵:
9. Վասն մարդկան քան զբարին այլ իրք մի՛ ասէք:

ԺԴ. Ի չորեքտասաներորդ թարկն գրած էր.

ԺԳ. Ը երեքտասան: Բ տասներեք: Ա չիք թարկն: Ե թարգն: IV ԺԳ: E գրած է:

1. K դամէն: IV խրատութեամբ: Ն չիք իմաստութեամբ: P կացէք փխ վարեցէք: D Յամէն յաւր զուք իմաստութեամբ և խրատով կացիք (Բ Զամենայն օուրս ձեր... կացէք):

2. D որ փխ և: IV չիք և: DF չար էք: IV գրարին փխ զաղէկն:

3. K և փխ խոկ: BIKP թէ: BK զչարքն: IV ի չարէն հետու կացէք: Ը Թէպէտ որ անխել էք զմարդն մե ճաւջէք: Բ Թէպէտ և աղէկ էք ըզչարն մի ճօշայք:

4. KP մարդկաց: Ը վատութեան (Բ ի վատութիւն K սուտ բան P ստին) փխ յիւրեանց սուտն: IV Վատ մարդկաց (V մարդոյն) և ստին մի բնկերէք:

5. E ի սիրելոյն: B և չարկամէ: Բ թշնամոյ (K բարեկամէ) փխ ի չարկամէ: H ի չարկամէ երկս՝ մի զարձուցանէք և Ս ի զարկմէ: BEHK զգութ: BH մի վերացուցանէք: KP մի վերցնէք: Ը ի սիրելուն զգոյթն մի վերցնէք: IV ի սիրելեացն զգոյթն մի վերացնէք:

6. E պեղծ: D ի յետ մահուն որ մեանելոց ևմք չար դիրք մի դնէք: P հետ պիղծ մեանի գձեր մեանին մի դնէք:

7. K չիք ձեզ: BEHP ուսումն:

8. BEH մի զպնիր: K մի խոսիր: P Խրատէ մի ամաչէք:

9. D մարդոյ: D մի խառսիր: P Ի մէջ մարդկանց քան զբարին այլ բան խոսիր:

ԺԴ. Ը չորեքտասան: Բ տասն և չորսուփն: AF չիք թարկն: V ԺԴ: K թէրկն:

1. Ով քան դքեզ աղէկ է և գիտէ՝ մեծ տե՛ս:
2. Իսկ այլ իրաց քան զիմաստութեան խնդրողք մի՛ լինիք:
3. Իմաստունքն քանի հեռի են, առ իւրեանքն մօտեսցո՛ւք¹⁰:
4. Զանցած ժամանակն հեշտ մի՛ համարիք:
5. Զինչ յաստըւորէ չունիք, ի մարդկանէ մի՛ քնքշաք:
6. Զձեր անհոգութիւն ի լեզուոյ պատրաստելոյն իմացէ՛ք:
7. Թէ զանհոգութիւն ուղէք՝ զճշմարտութեան արուեստ ուսի՛ք:
8. Իրք որ ի պահ առնուք և ի փոխ՝ վճարեցէ՛ք:
9. Խօսք որ չէ ի խելաց՝ տնտղեցէ՛ք և ապա ասացէ՛ք:

1. Ա որ: Ի շատ գիտէ: Ի տես զնա: Ը Ով որ դքեզ աղէկ գիտուն է զնայ մեծ տեսէք: IV Ով քան դքեզ աղէկ գիտէ մեծ տես զնա: Բ Ով քան զձեզ աղէկ է և գիտուն զինքն մեծ տեսէք:

2. Բ իսկի յայլ: IKV քանց: BEHIV իմաստութեան: Բ իմաստութեանց բանից այլ բանի խնդրող IK խնդրող: Ը Իսկ որ աւելի իրաց որոնումն մի տանէք, քան զխելացն և զիմաստութեան:

3. BHIV քան որ: Ի հեռի լինին (IKV հեռու): Կ իւրեանց: Ի մօտակա լերուք: IV մօտեցիք: Ը Իմաստութիւն քանի հեռի լինի գուք յինքն ի մօտ զնացէք: Բ Թէ իմաստունքն հեռի են գուք զնացէք իւրեանց մօտն:

